Umumiyat Nemlar

891.99.09
Z-36

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏ.-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ № 2

7.

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ

391.99.09
Ղ-36

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

03 APR 2011

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
№ 2 ԳԻՏԱ.-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ № 2

891.99.09
Դ-36

Ա. ԴԱՆԱԼԱՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ

Դասախոսություն՝ կարդացված Պետհամալսարանի լեկտորիումում
1938 թ. դեկտեմբերի 18-ին:

СИГНАЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

19 JUN 2013

64.384

Պատ. խմբագիր՝ Մ. Մկրյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարուխյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Յեսայան

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ-ՈՒՄ Գրքերի Ինստիտուտ
Մ. Հ. Աբեղյանի անվան գրադարան
ԵՐԵՎԱՆ

3417
39

Դավիթի լիազոր Ն. 2866, պատվեր 493, Տիրաժ 2000
Հանձնվել է արտադրության 11/VI 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 13/VII 1939 թ.
2³/₄ տպ. մամուլ, 1 մամուլում 38400 տպ. նիշ.

Պետհամալսարանի հրատարակչության տպարան, Երևան Տերյան 72

7

1.

«Սասունցի Դավիթը» հայ ժողովրդի հնագարյան հարուստ ու գունեղ վիպական բանահյուսության շողշողուն գոհարն է։ Նրա մեջ խտացված ու բյուրեղացված են հայոց հնագույն դիցաբանական-դյուցազնական առասպելների ու զրույցների, պատմական վեպերի ու վիպերգների (Հայկ և Բել, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Վահագն, Արտավազդ, Արտաշես, Տիգրան...) բովանդակության ու արվեստի լավագույն տարրերն ու տարերքը։

«Սասունցի Դավիթը» ստեղծել, մշակել և սերնդից սերունդ կենդանի խոսքով (բանավոր ավանդությամբ) հեռավոր դարերի խորքից մեր որերն են հասցրել հայ ժողովրդի տաղանդավոր զավակները — աշխատավորության ծոցից դուրս յեկած անգրագետ ու անուս գեղջուկ վիպասանները («Նաղլ ասողներ», «ասացողներ»)։ «Սասունցի Դավթի» մեջ նրանք մեծ վոգեվորությամբ ու բուռն թափով պատմել են այն հերոսական կռիվների մասին, վոր մղել են մեր նախնիներն իրենց հայրենիքի անկախությունն ու ազատությունը վոտնահարող ասարերկրյա նվաճողների դեմ։ «Սասունցի Դավթի» մեջ նրանք (գեղջուկ վիպասանները) մարմնավորել են ժողովրդի լավագույն հույզերն ու հույսերը, իղձերն ու ցանկությունները և դրսևորել գեղարվեստական խոսքի իրենց մեծ շնորհքն ու վարպետությունը։

Ճիշտ է, վեպի կենտրոնական դեմքը (Դավիթը), ինչպես նաև բոլոր մյուս գլխավոր հերոսները սասունցիներ են։ Ճիշտ է, նրա մեջ յերևան յեկող դեմքերը գործում և դեպքերը կատարվում են Սասունի և սրա հարևան մի քանի գավառների ու շրջակա յերկրների աշխարհագրական վոլորտում, սակայն վեպը շատ հեռու յե միայն Սասունի և սասունցոց վեպ լինելուց։ Ծնունդ առնելով պատմական Հայաստանի հիշյալ գավառում, «Սասունցի Դավիթը» չի պարփակվել միայն նրա շրջանակում։ Իր բովանդակությամբ և վոգի եյությամբ հարազատ լինելով ամբողջ աշխատա-

վոր հայ ժողովրդին, վեպը դարերի ընթացքում տարածվել և Հայաստանի համարյա բոլոր շրջաններում՝ դառնալով իսկական համաժողովրդական — համահայկական մի ստեղծագործություն։ Այդ են վկայում վեպի մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ պատումները՝ գրի առնված տարբեր ժամանակ, տարբեր վայրերում. այդ են վկայում հիշյալ պատումների մեջ եղած լեզվական (բարբառային) տարբերությունները և տեղագրական-աշխարհագրական ու կենցաղային յուրահատուկ կոլորիտը։

* * *

«Սասունցի Դավիթը» մի ծավալուն ու մեծ հերոսավեպ է՝ բաղկացած չորս առանձին ճյուղերից։ Դրանցից առաջինը հայտնի է՝ «Սանասար և Բաղդասար», յերկրորդը՝ «Մեծ կամ Առյուծաձև Մհեր», յերրորդը՝ «Սասունցի Դավիթ» և չորրորդը՝ «Պստիկ Մհեր» անունով։ Վեպի լավագույն և ամենաընդարձակ մասը կազմում է Դավթի ճյուղը։

Կապված լինելով իրար հետ մի միասնական գաղափարով (հայրենիքի պաշտպանություն), սերունդների հաջորդությամբ (հոր և որդու կապով) և վիպական գործողության աշխարհագրական միջավայրի (Սասուն) ընդհանրությամբ, վեպի վերոհիշյալ ճյուղերից յուրաքանչյուրն ունի իր գործողության ինքնուրույն կենտրոնն ու անկախ կյանքը։

ՎԵՊԻ ՃՅՈՒՂԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ճյուղ («Սանասար յեվ Բաղդասար»)։ Բաղդադի խալիֆան, Հայաստանի վրա կատարած իր արշավանքներից մեկի ժամանակ, բռնությամբ կնության է առնում հայոց Դավիթ թագավորի աղջկան՝ գեղեցկուհի Ծովինարին։ Ծովի մեջ գտնվող աղբյուրից իր խմած մեկ լիք և մեկ կիսատ բուռ ջրից հղիանալով՝ Ծովինարը ծնում է յերկու դյուցազուն զավակներ՝ Սանասարին (լիքը բռից) և Բաղդասարին (կիսատ բռից)։ Ժամանակ անց Բաղդադի խալիֆան՝ յերկիրն ավերելու և առ ու թալան բերելու նպատակով, նորից է արշավում Հայաստանի վրա։ Լուրջ դիմադրության հանդիպելով հայերից, նա ոգնության է կանչում իր մեծ կուռքին՝ ժատաղ խոստանալով նրան իր յերկու զավակներին։ Իմանալով այդ մասին Ծովինարից, Սանասարն ու Բաղդասարը սպանում են խալիֆային և վերցնելով իրենց մորը, նըստում են՝ Սանասարը ծովի տակից հանված Քուռկիկ Ջալալին, իսկ Բաղդասարը մի քամու ձի և հեռանում խալիֆի յերկրից։ Յերկար թափառումներից հետո, Սանասարն ու Բաղդասարը մի լեռնային անառիկ վայրում մեծ և ահռելի քարերից կառուցում են իրենց բերդ—շենը, որի անունը մի գեղջուկ ծերուկ Սասուն է դնում, ասելով՝ «սուն վեր սան սասուն»։ Լսելով յերկու հերոսական յեղբայրների համբավը, շրջակայքի անապահով ու աղքատ բնակիչները կամաց-կամաց հավաքվում են Սասնո բերդի շուրջը։ Սանասարն ու Բաղդասարը նրանց համար տներ են կառուցում (4 որում շինում են 40 տուն)։ Կարճ ժամանակից Սասունը դառնում է մարդաշատ ու շեն մի յերկիր։

* * *

Ստանալով Քաջանց թագավորի աղջիկ՝ քառասուն ճյուղ ծամ Դեղձուն-Ծամի նամակը, Սանասարը գնում է Պղնձե քաղաքը նրան բերելու։ Ճանապարհին մի շարք արգելքների յե հանդիպում (վաթսուն փահլեվաններին, ջուրն արգելող վիշապին)։ Բաղդասարն իր սևացած մատանուց գուշակելով յեղբոր ծանր դրությունը՝ ոգնության է հասնում նրան։ Յերկուսով հաղթահարում են բոլոր դժվարությունները և բերում թե Դեղձունին և թե նրա քրոջը։ Ամուսնանում են՝ Սանասարը Դեղձունի, իսկ Բաղդասարը նրա քրոջ հետ։

Սանասարից և Դեղձունից ծնվում են Վերգոն, Ջենով Հովանը և Մհերը։

Բաղդասարը մեռնում է անժառանգ։ Նա թողնում է Սասունը և գնում Բաղդադ, վորտեղ և մեռնում է։

Մհերի ծնվելուց հետո, շատ չանցած, մեռնում է նաև Սանասարը։

Բ. Ճյուղ («Մեծ կամ Առյուծաձև Մհեր»)։ Մհերը մանկությունը սկսում է պարապել վորսորդությամբ։ Վորսով նա յոթ տարի կերակրում է իր հայրենիքը։ Սասունը հարևան յերկրների հետ կապող ճանապարհին մի առյուծ և լույս ընկնում։ Մհերն սպանում է առյուծին և ազատում յերկիրը վերահաս սովից։

Այնուհետև, մենամարտի մտնելով Մեծ Մսրա Մելիքի հետ, Մհերը հաղթում է նրան և ազատում Սասունը Մելիքին հարկատու լինելուց։

Քեռին և հորեղբայրն ուզում են ամուսնացնել Մհերին գեղեցկուհի Արմաղանի հետ։ Պարզվում է, վոր Արմաղանին տարել է Ալաթի Սպիտակ դեվը։ Մհերը գնում, սպանում է Սպիտակ դեվին և ամուսնանում Արմաղանի հետ։

Մհերից և Արմաղանից ծնվում է Դավիթը։ Շուտով մեռնում են Մհերն ու Արմաղանը։ Դավիթը մնում է իր հորեղբոր՝ Ջենով Հովանի խնամքին։

Պ. Ճյուղ («Սասունցի Դավիթ»)։ Չկարողանալով պահել Դավթին, Ջենով Հովանն ուղարկում է նրան Մըսր՝ Իսմել Խաթունի մոտ, վորի հետ կենդանության ժամանակ ապրել էր Մեծ Մհերը՝ ունենալով նրանից Մըսրա Մելիք անունով մի արու զավակ։ Խաղի ժամանակ Դավիթը բռնում է Մելիքի գուրզը։ Դավթի մեջ իր ապագա թշնամուն գուշակելով, Մելիքը վորոշում է սպանել իր ապագա թշնամուն գուշակելով, Մելիքը վորոշում է սպանել իր ապագա թշնամուն, սակայն չի հաջողում։ Դավիթը գալիս է Սասուն՝ հորեղբոր (Ջենով Հովանի) և քեռու (Թորոսի) մոտ։ Ջենով Հովանը նրան նախրապան է դարձնում։ Դավիթն ընկերանում է նախրորդների հետ, սպանում է նրանց տավարը տանող դեվերին և վերջիններիս թալանած հարստությունն ու վոսկին վերադարձնում Սասունի բնակչությանը։

Շուտով Դավիթը թողնում է նախրորդությունը և դառնում վորսորդ։ Մի որ էլ վորսից վերադառնալով, իր հայրենական տունը գտնում է Մելիքի հարկահաններին՝ 7 տարվա հարկը չափելիս։

Դավիթը պատուհասում է նրանց և դատարկ հետ վերադարձնում։ Զայրացած Մսրա Մելիքը մեծ զորքով գալիս է Սասունի վրա։ Կորեկի արտի տեր աղքատ պառավի ցուցմունքով Դավիթն առնում է հորեղբորից հոր զենքերն ու ձին, զինավառվում և գնում Մելիքի զորքի դեմ։ Մսրա բանակից մի ծերունի զորական հորդորում է Դավթին վերջ տալ զոռով կռվի դաշտ բերված անմեղ զինվորների կոտորածին և մենամարտել իրեն՝ Մելիքի հետ։ Լսելով արաբ ծերունու խոսքերը, Դավիթն ընդհատում է կոտորածը և ձին քշում դեպի Մելիքի վրանը։ Մելիքը դավաղրաբար հոն է նետում Դավթին։ Ջենով Հովանի ոգնությամբ Դավիթը դուրս է գալիս հորից և մենամարտելով Մելիքի հետ թրի մի հարվածով վոչնչացնում է նրան։

Ջենով Հովանը նշանում է Դավթին խլաթցի Զմշկիկ Սուլթանի հետ։ Սակայն Դավիթը լսելով գուսաններից կապուտկոզցի գեղեցկուհի Խանդութ Խանումի գովքը, թողնում է Զմշկիկին, գնում Կապուտկոզ, հաղթում Խանդութի հոր թշնամի յոթ թագավորներին և բերում իր հարսնացվին։ Ճանապարհին Դավթի դեմ է դուրս գալիս Զմշկիկը և մենամարտի հրավիրում նրան՝ իրեն հասցրած վիրավորանքի համար։ Դավիթը խոսք է տալիս տանել Խանդութին տուն և յոթ որից վերադառնալ կռվելու, բայց գալով Սասուն և ամուսնանալով Խանդութի հետ, մոռանում է իր խոստումը...

Դավթից և Խանդութից ծնվում է մի դյուցազուն մանուկ։ Իր հոր՝ Առյուծաձև Մհերի անունով, Դավիթը նրան Մհեր է կոչում։

Յոթ տարի անց մի որ լողանալու ժամանակ Դավիթը տեսնում է իր թեվի սեացած Խաչ Պատերազմին և, հիշելով Զմշկիկին տված իր խոստումը, շտապով գալիս է նրա մոտ։ Գետափի յեղեգնուտից դուրս է գալիս Զմշկիկի դարանակալած աղջիկը և թունավոր նետով մեջքից վիրավորելով, սպանում է Դավթին։ Լսելով նրա մահվան բոթը Խանդութն ինքնասպան է լինում՝ բերդի տանիքից իրեն ցած նետելով։

Պ. Ճյուղ («Պատիկ Մհեր»)։ Մհերը քեռու և հորեղբոր հետ առնում է Դավթի արյան վրեժը՝ սպանելով Զմշկիկին և ավերելով Ալաթը։ Նա պատժում է նաև իրեն թշնամիների ձեռքը հանձնող մատնիչ վանահորը՝ գլուխը սյան տակ թողնելով։ Մհերն ամուսնանում է Պաճիկ թագավորի աղջիկ գեղեցկուհի Գոհարի հետ։ Իր շրջագայությունների միջոցին նա ընկերանում է 40 փահլևան յեղբայրների հետ, սպանում է նրանց հայրենի քաղաքն ավերող մարդակեր պառավին։ Ժամանակ անց Մհերը Ջենով Հովանի կանչով գնում է Սասուն՝ վոչնչացնում իր հայրենի հողը տիրել փորձող Կոզբադնի չորս թոռներին, աղատում հեղեղից Զզիրև քաղաքը... Տուն գալով Մհերը մեռած է գտնում կնոջն ու հորեղբորը։ Մենակ մնացած լինելով աշխարհում և դառնացած շրջապատի անարդար կարգերից՝ գաղաղած Մհերը կռիվ է պահանջում աստծուց, մենամարտում վերջինիս ուղարկած հրեշտակների հետ և... փակվում Ակռվու քարում։ Իրեն այցի յեկած հովվի հարցումին, թե յե՞րբ է նա մտադիր դուրս գալու քարից, Մհերը պատասխանում է.

«Քանի աշխարքը չար է,
Ու հողն էլ դալբցեր է,
Ցես չեմ մնա մեջ աշխարքին։

Վոր աշխարք ավերվի մեկ եկ շինվի՝
Յերբոր ցորեն եղավ քանց մասուր մի,
Ու գարին եղավ քանց ընկուզ մի,
Են ժամանակ հրամանք կա, վոր ենենք եստեղեն»։

Ա. 118, 933, Բ. 44

2.

Ինչպես ամեն մի ժողովրդական վեպ, «Սասունցի Դավիթը» իր հիմքով պատմական ստեղծագործություն է։ Նրա մեջ վիպականորեն անդրադարձել են՝ արաբական խալիֆաթի դաժան տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի դրվագները 7—10 դարերում։

Վեպի մեր ձեռքի տակ յեղած 50 պատումներում նկարագրված դեպքերի ու դեմքերի զուգադրություն-համեմատությունը հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների, իրական դեպքերի ու դեմքերի հետ պերճախոս կերպով հաստատում է այդ բանը։

Պատմությունից հայտնի յե, վոր 7-րդ դարի կեսերին, արաբական խալիֆաթը, մի քանի անգամ արշավանքներ կազմակերպելով Հայաստանի վրա (640, 642—643 թ.թ.), ավերելով յերկիրը, կողոպտելով ու գերեվարելով ժողովրդին, 650 թվին հաջողում է տիրել Հայաստանին, դարձնելով այն իրեն հպատակ յերկրներից մեկը։ Հայաստանի վրա, այնուհետև, ծանրանում է արաբական խալիֆաթի հարկային քաղաքականության ծանր լուծը, վոր տևում է մոտ յերեք դար։ Արաբ խալիֆներն իրենց վոստիկանների միջոցով, հարկի անվան տակ, սկսում են կողոպտել յերկիրը, թալանել ժողովրդին՝ տանելով նրա ունեցվածքն ու ապրուստի վերջին միջոցները։ Իրենց «առաքելությունը» հաջող կատարելու համար արաբ վոստիկաններն ու հարկահանները վոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում (ծեծ, կախաղան և այլն)։

Արաբական խալիֆաթի՝ Հայաստանում վարած հարկային կեղեքիչ քաղաքականության և հարկապահանջության ժամանակ արաբ վոստիկանների կողմից գործադրվող դաժան միջոցների մասին վորոշ գաղափար տալու համար բերենք ժամանակակից հայ պատմիչ (8-րդ դար) Ղևոնդի մի վկայությունը. «Զսոյն ժամանակս ի հրամանատարության Եղեսի և յիշխանութեանն Աբդլայի միւսոյ յոյժ ծանրացավ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս հայոց. քանզի դժոխաձև ագահութիւն անհամբոյր թշնամւոյն ոչ շատացաւ ուտել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հոտիս և ըմպել զարիւն իբրև զջուր զարհամարհանս նոցա. այլ համօրէն զբոլոր երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանդիւք. զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպահարանս ընչից իւրեանց՝ վոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, գելարանօք, և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան։ Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ զողեալ թաղչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետից։ զի ոչ էր գիւտ զոր հայցէինն, գտանել պահանջումն սակի արծաթոյն, այլ ըստ գլխոյ արանց. որովք թափուր մնացեալք յամենայն ստացուածոց՝ կապէին կապանօք անանկութեան երկիրս Հայոց, և առհասարակ ճաշակէին ի հնոցէ աղքատութեան» (տես Ղևոնդ, էջ 135—136)։

Սակայն արաբները չեն բավականացել միայն դրամական և բնարդյունքի հարկերով, վորոնց մասին գրում են մեր պատմիչները։ 9-րդ դարի արաբ մատենագիր Ահմեդ Բալաձորիի վկայությամբ՝ նրանք նվաճված յերկրներից հարկ են պահանջել, բացի նյութական բարիքներից, նաև վորոշ թվով «սեվահեր, սեվահոն, յերկար արտահանունքներով և բարձրահասակ» աղջիկներ ու պատանիներ։

Արաբների տիրապետության վողջ շրջանում Հայաստանի ազգաբնակությունը—աշխատավոր գյուղացիությունն ու ռամիկները, մերթ ավելի, մերթ պակաս, գտնվել են խալիֆաթի հարկային քաղաքականության ծանր լծի տակ։

Սակայն, հայրենասեր և ազատատենչ հայ ժողովուրդը լռելյան չե, վոր ընդունել է արաբական տիրապետությունը և վոչ եկ հնազանդությամբ յենթարկվել խալիֆաթի հարստահարություններին։ Նա մեկից ավելի անգամներ հերոսաբար պաշտպանել է իր հայրենիքի սահմանները արաբական բանակների հարձակումներից և բազմիցս զինված ապստամբել արաբ կեղեքիչ հարկահանների և վոստիկանների դեմ։

7—10 դարերի մի շարք հայ և արաբ մատենագիրներ հիշատակում են արաբների արշավանքների և հարստահարությունների դեմ հայ ժողովրդի կազմակերպած՝ զինված ինքնապաշտպանությունն ու ապստամբությունները։

Բերենք մի քանի բնորոշ փաստեր։

7-րդ դարի հայ պատմիչ Սեբեոսի վկայությամբ, 640 թ. աշնանը Դվինի վրա արշավող արաբական զորքերը քաղաքում հանդիպում են Արարատյան դաշտի բնակիչների և Դվինի պահապան զորքերի միացյալ դիմադրությանը: Իբրև դեպքերին ժամանակակից, Սեբեոսը մանրամասն հիշում է հայ ժողովրդի ժղած կռիվը քաղաքը պաշարած արաբների դեմ: Նույն Սեբեոսը գրում է նաև արաբների Հայաստանի վրա կատարած յերկրորդ մեծ արշավանքի ժամանակ (642—643 թ.թ.) հայերի ցույց տված ռազմական լուրջ դիմադրության մասին:

Արաբների դեմ մղած հիշյալ ճակատամարտերը կազմակերպել և գլխավորել է 7-րդ դարի հայ աչքի ընկնող քաղաքական գործիչ և խոշոր ռազմագետ՝ պատմական Թեոդորոս Ռշտունին:

Հաճախակի յեն յեղել Հայաստանում նայեվ արաբների դեմ ուղղված ապստամբությունները:

Այսպես, որինակ, 8-րդ դարի հայ պատմիչ Ղեվոնդը հիշում է, վոր Շիրակի ժողովուրդը չկարողանալով տանել արաբների և, վոր Շիրակի ժողովուրդը չկարողանալով տանել արաբների կողմից կիրառվող հարկահանության և շահագործման դաժան ձևերը, «վոգի ի բռին» դիմում է միջոցների և, լավ համարելով քաջարար մեռնելը վանգավոր կյանքից, 772 թ. Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում ապստամբության և նույն թվին Կուժայրիում (Գյուժրի—Լենինական) սպանում արաբ հարկահավաքին: Ապստամբությունը ճնշվում է Դվինից ուղարկված արաբական զորքերի ոգնությամբ միայն:

Շիրակին հետևում է պատմական Հայաստանի Բագրևանդ և Տարոն գավառների բնակչության ապստամբությունը՝ Մուշեղ Մամիկոնյանի ղեկավարությամբ: Ղեվոնդի վկայությամբ այս ապստամբությանը հարել են «բոլոր վշտակիրներն ու վտանգվածները», «ռամիկ ժողովուրդը» ... «Յեվ այսպես միախուռն ժողովելք առ միմիանս արք իբրև 5,000, զի բազումք ի ռամիկ ժողովոց յեկյալ խառնեալին ի գունդն նոցա ...»: Ապստամբները սպանում են հարկահանին, քշում յերկրի սահմաններից՝ ապըստամբությունը ճնշելու ուղարկված ավելի քան 4,000 հոգուց բաղկացած արաբական կանոնավոր զորքը:

Ապստամբների այս հաջողությունները վոգեվորում են Հայաստանի մյուս գավառների ազգաբնակությանը: Մեկը մյուսի հետևից վոտքի յեն յելնում Հայաստանի բոլոր նահանգներն ու գավառները:

Ապստամբությունը ճնշելու համար արաբական խալիֆաթը 775 թ. գարնանը 30,000 թուրքական զորք է ուղարկում Հայաստան: Անհավասար կռվում ապստամբները պարտվում են:

Ժողովրդական ապստամբությունների հետևյալ մեծ ալիքը արաբական խալիֆաթի դեմ բարձրանում է 850 թվին, պատմական Հայաստանի Տարոն և Սասուն գավառներում:

Ինչպես նախորդ, նույնպես և այս ապստամբություններին առիթ է ծառայում խալիֆաթի հարկային քաղաքականության խստացումը: Համառոտակի նշենք այդ ապստամբության հետ կապված պատմական փաստերը:

849 թվին Զավը (Մուտավաքիլ) անունով արաբ ամիրապետը Հայաստան է ուղարկում իր Աբուսեթ վոստիկանին՝ հարկ հավաքելու: Սակայն Աբուսեթի «առաքելությունն» անհաջողության է մատնվում: Տարոնի և Վասպուրականի բնակչությունը կես ճանապարհից հետ է վերադարձնում նրան, տալով պահանջված հարկի մի մասը միայն: Աբուսեթին հաջորդում են նրա զորավարներ՝ Ալան և Մուսեն: Սրանք ուղում են զենքի ուժով հասնել իրենց նպատակին, սակայն մեծ ջարդ կրելով նույն գավառների ապստամբ ժողովրդի կողմից, հաղիվ են ազատում իրենց կյանքը: Պարտված Մուսեյի և Ալայի փոխարեն, ամիրապետը 851 թվին մեծ բանակով Հայաստան է ուղարկում Յուսուֆ վոստիկանին: Վերջինս գրավում է ամբողջ հարավային Հայաստանը, ավերելով յերկիրն ու գերեվարելով բնակիչներին: Վերևում հիշված արաբ մատենագիր Բալաձորիի վկայությամբ, Յուսուֆի գավառական կառավարիչներից մեկը՝ ալ-Ալյա իբն Ահմադ անունով, նույն ժամանակ կողոպտում և Սասունում գտնվող Աքթահ-Արթան (=Մարութա) անունով վանքը, անարգում ու կոտորում նրա միաբաններին:

Յուսուֆի ավերածությունների և գերեվարության մասին վկայում է նայեվ հայ պատմիչ Թոմա Արծրունին. «... վարեաց գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Ասորոց և յամենայն սահմանս տերութեան Տաճկաց. և զկես գերուոյն ընդ իւրեանց ունելով ի քաղաքն, լինել իւրեանց ջրկիրս և փայտակոտրս ... յավեր դարձուցյալ զբնակ աշխարհն» (Թ. Արծրունի, Պատմութիւն Հայոց, էջ 118):

Յուսուֆի և նրա զորականների ասպատակություններից, շնորհիվ իր անառիկ դիրքի և ըմբոստ ժողովրդի, զերծ է մնում Սասունի Խույթ կոչվող լեռնային մասը միայն: Վերջինիս բնա-

կիչները (վորոնք ըստ Բալաձորիի գյուղացի մշակներ են), Խութեցի Հոճանի առաջնորդությամբ ապստամբում են Յուսուֆի դեմ և «համագունդ ի մի վայր հավաքեալ և զմի զինուորութիւն զինուորեալ և յանկարծակի ի վերայ տարմարար յարձակեալ» գալիս են նրա զորքերի վրա, դուրս քշում իրենց յերկրից և ազատում բանտարկված գերիներին։ Այնուհետև ապըստամբները շրջապատում են Մուշի ս. Փրկիչ յեկեղեցին, վորի գմբեթի մեջ ապաստան եր գտել սարսափահար Յուսուֆը։ Նրանցից մեկը բարձրանում է գմբեթը և տեղն ու տեղը սրախողխող անում Յուսուֆին։

Ապստամբությունը ճնշելու և Յուսուֆի սպանության վրեժը առնելու համար 852 թվին խալիֆաթը, Բուղա զորավարի գլխավորությամբ, մի մեծ բանակ է ուղարկում Հայաստան։ Հերթով ճնշվում են Հայաստանի տարբեր գավառների ապստամբությունները, կոտորվում, գերեվարվում են բնակիչները և հրի ու սրի մատնվում յերկիրը։

3.

«Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի պատմական առանցքն են կազմում 7—10 դարերում Հայաստանում տեղի ունեցած վերոհիշյալ անցուդարձերը, մասնավորապես հարկահանությունը և վերջինիս պատճառով հայ ժողովրդի և հատկապես Սասունի ու հարևան գավառների աշխատավոր գյուղացիության՝ արաբական խալիֆաթի և նրա կեղեքիչ վոստիկանների դեմ մղած հերոսական կռիվներն ու ապստամբությունները։

Ինչպես պատմության, այնպես էլ վեպի մեջ (Դավթի ճյուղի անխտիր բոլոր պատումներում), Բաղդադի խալիֆը կամ Մսրա Մելիքը (վոր պատմականորեն փոխարինել է Բաղդադի Խալիֆին) եր հարկահաններին (Կողբադին, Բադին, Սյուղին, Խոլբաշին և այլն) ուղարկում է Սասուն յոթ տարվա հարկը բերելու.

«Ելավ, Մսրա Մելիք ոխտը մարդ ճամբեց,
Ասաց.— Իմ խարջ ոխտը տարի կա, չեն տվեր.
Ոխտը ուղտի բեռ վոսկի է.
Ոխտը ուղտի բեռ արծաթ.
Քառասուն աղավ աղջիկ էլ արմաղան.
Քառասուն կարճ կնիկ՝ երկանք աղան.
Քառասուն անծին երինջ մատաղ.
Քառասուն բուղա—աչառ լծկան»։

Ա. 346

Սակայն, ինչպես պատմության մեջ, նույնպես և վեպում, հարկահանները միշտ չեն, վոր կարողանում են կատարել իրենց արված հանձնարարությունը։ Դավիթը պատուհասում է նրանց և ձեռնունայն հետ ուղարկում.

«... Դավիթն էլ խերստեց, կայնավ,
Չչափ եզար Կողբադնի ճակատ.
Կողբադնի պռկտեր կտրեց,
Ատամներ լե քաշեց, բվռնեց ճակատ, ասաց,
— Գնա, ջուհափ տուր քու Մըսրա Մելքին,
Ինչ կանի, թըխ անի»։

Ա. 16

Բացի հարկահանությունից, վեպի մեջ (դարձյալ Դավթի ճյուղի համարյա բոլոր պատումներում), արձագանք է գտել նաև արաբ վոստիկաններից մեկի կողմից՝ Սասունում գտնվող Մարութա վանքն ավերելու և վանքի միաբաններին կոտորելու վերաբերվում հիշված պատմական միջադեպը։

Մսրա Մելիքը (Բաղդադի խալիֆան), լսելով, վոր Դավիթը վերանորոգել է Մարութա վանքը, ուղարկում է իրեն մարդկանց (Կողբադնին, Խոլբաշուն և այլն), վորպեսզի՝ գնան ու քանդեն այն.

«Մսրա Մելիք իմացավ՝
Դավիթ Մարութա Բանձրիկ Ասպարածին
Նորեն շիներ է.— Կուղբադին, ասաց,
Գնա, զՄարութա Բանձրիկ Ասպարածին քանդի, արի։
Կուղբադին առավ հինգ հազար ձիավոր, եկավ.
Մարութա Բանձրիկ Ասպարածին քանդեց.
Սպանեց քառասուն նորընծա երեց.
Սպանեց քառասուն վարդապետ.
Սպանեց քառասուն յեպիսկոպոս.
Սպանեց քառասուն ավագ սարկավագ.
Սպանեց քառասուն պակաս մեկ սարկավագ»։

Ա. 74

Յեվ ինչպես վոր պատմության մեջ Սասունի գյուղացիությունը անպատիժ չի թողնում վանքն ավերող և միաբաններին կոտորող վոստիկանին, ապստամբելով և դուրս վռնդելով նրան Սասունից, այդպես էլ վեպում Դավիթը Մարութա վանքի ավերման բոթն առնելուն պես՝ հետապնդում և Կողբադնին (Խոլբաշուն և այլն) և բռնելով նրան պատուհասում։

Այս անդամ մեծ զորքով Սասունի վրա յե գալիս ինքը Մսրա Մելիքը (Բաղդադի խալիֆան).

«Մսրա Մելիք ժողվեց իր կոշուն,
Եկավ Լեռա դաշտ—Բաթմանա ջրու վերեն։
Ենու կոշուն ենքան եր,
Վոր գետու վրեն առաջի եկողը ջուր խմավ,
Խմելով՝ գետ կտրավ,
Ցածի մարդիկ առանց ջուր մնացին։
Ջուղաբ տվեց Դավթին,
Թե, «Քու հողն երա, յես եկա»...

Ա. 351

Կռիվը վերջանում է Դավթի հաղթանակով, վորը թրի մի հարվածով վոչնչացնում է քառասուն գոմշի կաշու, քառասուն ջրաղացի քարի տակ թաքնված թշնամուն.

«Դավիթ գնաց, եկավ,
Հիշեց զՄարութա Բանձրիկ Աստվարածին,
Խաչ Պատերազմին, ինչ վեր իր աչ թեվին,
Ջուր մեկ թուր եղար։
Վոր եղար, զքառասուն գոմշի կաշին կտրեց,
Քառասուն ջաղջի քար լե կտրեց,
Մսրա Մելիքի գլուխ դագաթ լե կտրեց»։

Ա. 31

Մսրա Մելիքի մեծ զորքով Սասունի վրա արշավելու, Դավթի և Մելիքի կռվի, և Դավթի ձեռքով Մելիքի սպանվելու այս պատմությունները հիշեցնում են՝ Սասունից հալածված Աբուսեթ և Մուսե անուններով պատմական հարկահանների փոխարեն՝ ապըստամբ ժողովրդին հնազանդեցնելու և յերկիրը կողոպտելու նպատակով ամիրապետի կողմից մեծ զորքով Հայաստան ուղարկված Ցուսուֆ վոստիկանի դեմ Խութեցի մշակների ապստամբությունը Հովնանի ղեկավարությամբ, և ապստամբներից մեկի կողմից Ցուսուֆին Մուշի ս. Փրկիչ յեկեղեցու դմբեթում սրախողխող անելը։

«Սասունցի Դավթի» մեջ պատմական են վոչ միայն կարևոր դեպքերը, այլև գործող անձերից մի քանիսը։

Վեպի կենտրոնական դեմքը՝ Սասունցի Դավիթը, Բաղդադի խալիֆայի կամ Մսրա Մելիքի դեմ մղած իր հերոսամարտով, հիշեցնում է Ցուսուֆի դեմ Սասունի ժողովրդական ապստամբության կազմակերպիչ և ղեկավար՝ Խութեցի Հովնանին։

Ճիշտ է, Դավիթը չի կրում Հովնան անունը, բայց վերջինս մնացել է վեպի մեջ, կապվելով Դավթի կյանքի ու գործի մանանկից նրա հորեղբոր (Ջենով Հովանի) անվան հետ։ Ժողովրդական

վեպի մեջ անունների ու անձերի նման «տեղաշարժեր» հազվադեպ չեն։

Վեպի պատմական յերկրորդ կարևոր դեմքը՝ քեռի Թորոսն է կամ Թեաթորոսը, վոր վիպական արձագանք է արաբների ներխուժման դեմ հայ ժողովրդի զինված դիմադրությունները գլխավորող, վերվում հիշված պատմական Թեոդորոս Ռշտունու։ Այնուհետև պետք է հիշել Դավթի վոսոխ Բաղդադի խալիֆին։ Վերջինս վեպի մեջ կրում է նույն անունը և կատարում նույն դերը, ինչ վոր իրական պատմության մեջ։

Այսպես, պատումներից մեկի մեջ նա մեծ զորքով գալիս է Հայաստանի վրա, կոտորում ժողովրդին և ահագին քանակությամբ գերիներ տանում.

«Բաղդադի խալիֆեն շատ զոր ու զորընդեղ կեղնի,
Ասքար կենե, կը գա վեր մեր ազգին.
Շատ զմեր ազգ կը նվազցու,
Ու շատ գերի կը բռնե, տանի»։

Բ. 7

Մի այլ տեղ՝ նա իր հարկահավաքներից լսելով հայոց թագավորի աղջկա անպատմելի գեղեցկությունների մասին և ցանկանալով անպայման տիրել նրան, հրամայում է իր մարդկանց գնալ Հայաստան և ինչ գնով ել լինի բերել աղջկան.

Խալիֆեն ասաց.
—«Հա, ասքար, ասքար երեք, գնացեք,
Աղջիկը կը տա, կըտա, չի տա՝
Քար քաղեցեք, ավազ մաղեցեք.
Ժողվեցեք, բերեք՝ ինչ կա»։

Ա. 309

Վեպի մի շարք պատումներում արձագանք է գտել նաև Սասունն ավերող պատմական Բուղա վոստիկանը, սակայն վոչ թե իբրև վոստիկան կամ հարկահավաք, այլ իբրև Մսրա Մելիքի (Բաղդադի խալիֆայի) փահլևան՝ Բաթմանա Բուղան, վորին Մելիքը (կամ խալիֆը) հանձնարարում է սպանել մանուկ Դավթին.

«Ելավ, ինչ երավ Մելիք.—
Զ՝Դավիթ տվեց Բաթմանա Բուղին,
Զարբահար Քամին փահլևաններուն,
Թասլիմ երաց, ասաց,—Ետու կը տանիք,
Կերթաք Բաթմանա կարմնջի վերեն,
Կը սպանեք, ինձի մեկ շուշա երուն կը բերեք,

Ենու ջանդակ կը թալեք գետ, կերթա.
Ենու երուն կը բերեք,
Վոր յես խմեմ, իմ սիրտ խովնա»։

Ա. 337

«Սասունցի Դավթի» մեջ, բացի վերոհիշյալ պատմական դեպքերից ու դեմքերից, վորոնք վերաբերում են գլխավորապես Սասունի IX դարու պատմությանը և վորոնք կազմում են վեպի պատմական առանցքը, կան նաև պատմական մի շարք այլ հիշողություններ՝ ավելի հին և ավելի ուշ շրջաններից։

Հին շրջանի հիշողություններից է, որինակ, պարսից Շապուհ արքայի անվան հիշատակությունը (Շապու արքան, Շըպըքան Խորասական և այլ ձևերով)։ Վերջինս վեպի մեջ հանդես է գալիս իբրև Խանդութ Խանումի ուղնկաններից մեկը։ Դավիթը կռվում է նրա դեմ և սպանելով առնում Խանդութին։

Իբրև նոր շրջանի հիշողության նմուշներ կարելի յե հիշել՝

1. Բապը Ֆրենկին (Հռոմի պապին)։ Ինչպես Շապուհ արքան, սա ևս վեպում հանդես է գալիս իբրև Դավթի թշնամիներից մեկը, վորի դեմ կռվում և սպանում է Դավիթը։

2. Մսրա Մելիքին, վոր արձագանք է XIII դարի սկզբներին Հարավային և Արևմտյան Հայաստանը գրավող Մսրա (Ցեղիպտոսի) եյուբյան հարստության թագավորների (մելիքների), վորոնց դեմ հերոսական ու համառ կռիվներ են մղել պատմական Հայաստանի հիշյալ յերկու մարզերի և մասնավորապես Սասնո գավառի բնակիչները։

«Սասունցի Դավթի» մեջ պատմական վերոհիշյալ հին ու նոր դեպքերի ու դեմքերի հիշատակության հետ մենք գտնում ենք նաև դրանց շուրջը հյուսված վիպական բանահյուսության նկատելի արձագանքները, մասնավորապես՝ պարսից նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած յերկարամյա հերոսական կռիվների մասին ստեղծված մեր հին ժողովրդական վեպի արձագանքները (տես՝ Մամիկ-Կոնակի, Վաչեյի, Մուշեղի, Պապի և ուրիշների շուրջը հյուսված ժողովրդական պատմվածքներն ու զրույցները, վոր պահպանվել են Փ. Բյուզանդի և 5-րդ ու հետագա դարերի մեր մի քանի այլ մատենագիրների մոտ)[1]։

4

«Սասունցի Դավթի» թեման (պատմական մատաղը) արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական-

[1] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, տես՝ «Ազգագրական հանդես», 1907 թ. գիրք XVI, եջ 101—103։

ազատագրական պայքարը լինելով, նրա բուն եյությունն են կազմում՝ հայրենասիրության, ժողովրդասիրության, ազգային ամերաշխության ու խաղաղասիրության գաղափարները, ժողովրդի իղձերն ու յերազները՝ խաղաղ աշխատանքի և լիառատ կյանքի մասին։

Առաջին և ամենահիմնական գաղափարը, վոր կարմիր թելի նման անցնում է վեպի բոլոր պատումներում, դա հայրենասիրությունն է։ «Սասունցի Դավթի» գլխավոր հերոսները դրա կենդանի կրողներն են։ Նրանք սերտորեն կապված են իրենց յերկրին և անսահմանորեն նվիրված նրա պաշտպանության գործին։

Վիրն է այդ հայրենիքը և ինչով է նա նվիրական Դավթի և մյուսների համար։

Վեպի հերոսների հայրենիքը («խերանական յերկիրը» կամ «խերանց խերանան») Սասունն է, պատմական Հայաստանի հարավային գավառներից մեկը, վոր հայտնի յե յեղել իր լեռնային անառիկ դիրքով և ըմբոստ ու հերոսական ժողովրդով։ Այստեղ են ծնվում, աշխատում և կատարում իրենց սխրագործությունները վեպի գրեթե բոլոր գլխավոր հերոսները։ Սասունը նվիրական է նրանց համար.

1. Վորովհետև այն խլված չէ ուրիշից բռնության ու զենքի ուժով, այլ հիմնադրված է իրենց իսկ կողմից՝ քրտնաջան աշխատանքի և ընության տարերքի դեմ մղած պայքարի գնով (տես՝ յերկու յեղբայրների կողմից Սասնո բերդի հիմնադրման պատմությունը)։

2. Վորովհետև այնտեղ ապրում ու աշխատում է վեպի հերոսներին հարազատ աշխատավոր ժողովուրդը, վորին պաշտպանում ու հովանավորում են նրանք (տես՝ Սանասարի, Բաղդասարի, Մհերի հոգատարությունը Սասնա բնակչության համար)։

«Սասունցի Դավթի» հերոսների սերը դեպի իրենց հայրենիքը զուգորդված է նրանց դեպի ժողովուրդն ունեցած ջերմ սիրո հետ։ Դրա առաջին փայլուն որինակը վեպի մեջ տալիս է յերկու դյուցազուն յեղբայրների (Սանասարի և Բաղդասարի) մայրը՝ Ծովինարը։ Ցերը Բաղդադի խալիֆան նրան տիրանալու պատակով իր վերջնագիր ուղարկում Գագիկ թագավորին, Ծովինարը ինքնակամ վորոշում է գնալ, դառնալ ատելի խալիֆի կինը, մտածելով՝

3417
35

ՀԱՅԿՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀՄ
Ա. Ա. Մասեանի
անվան գրադարան

«Վոր չերթամ,
Իմ հոր յերկիր քար քաղեն, ավազ տի մաղեն.
Ցես մեկ ջան եմ, երթամ կորսվիմ լավ է,
Քանց իմ հոր յերկիր ավերի։
Ծովինար խոսք ետու»։

Ա. 309

Հայրենասիրության և ժողովրդասիրության վոչ պակաս ցայտուն որինակ է Դավթի հոր Մեծ կամ Առյուծաձև Մհերի՝ առյուծին սպանելու հերոսական պատմությունը։ Քեռուց խմանալով, վոր Սասունում տիրող թանգության ու սովի պատճառն իր յերկիրը հարևան հացաշատ վայրերի հետ կապող ճանապարհին լույս ընկած առյուծն է, Մհերն անմիջապես շտապում է այնտեղ, մենամարտում նրա հետ, սպանում և ազատում ճանապարհը.

«Կանչեց Բանցրիկ Մարաթուկ,
Ձեռ թալեց վերի չանգեն, ներքի չանգեն,
Մեջտեղեն ճղեց, երեց երկու կոր,
Մեկ թալեց ճամբու են կողմ,
Մեկն ել ճամբու են կողմ»։

Բ. 146

Յերթ Ծովինարը, մեծ անձնազոհությամբ, ազատում է իր յերկիրն ու ժողովրդին խալիֆի հրոսակների ձիերի սրմբակներից, ապա նրա թոռ՝ Մհերը նույն կերպ, փրկում և սասունցիներին վերահաս սովից։

Բնորոշ որինակներ են նայել Փոքր Մհերի սխրագործությունները, մասնավորապես Զմշկիկ Սուլթանին և Կողբաղնի թոռներին սպանելու պատմությունները։

Դավթի մահվանից հետո, նախ Զմշկիկը և ապա Կողբաղնի թոռները փորձում են ավերել Սասունը. լսելով այդ մասին իր հորեղբորից (քեռուց), Մհերը կռվում և վոչնչացնում է թե մեկին և թե մյուսներին.

«Մհեր ելավ Թուր Կայծակին քաշեց,
Գնաց զորքին խառնվավ.
Աջու եղար, ձախու եղար,
Վոչ ֆերըզ թողեց, վոչ փահլևան,
Վոչ Զմշկիկ Սուլթան.
Ինչ վոր կար, բոլոր կոտորեց, ասաց.
—Ես իմ հոր փոխ»։

«Մհեր ելավ լուսուն ելավ,
Ձուր ձին հեծավ, քշեց, գնաց Լեռա դաշտ։
Տեսավ Կողբաղնի չորս թոռներ եկան.

. . . . . .

Ելավ չորս թոռներն էլ բռնեց, կապեց,
Առեց, երեր հրողպոր մոտ,

. . . . . .

Երկուս փառչմեց դռան են կողմ, երկուս են կողմ»։

Ա. 231, 239

Հայրենասիրության և ժողովրդասիրության գաղափարի ամենափայլուն որինակն ու կենդանի մարմնացումը վեպում, սակայն, հանդիսանում է ինքը Դավիթը։

Տարբեր յերանգներով ու ձևերով խմաստուն ժողովուրդն իր վեպում դրսևորում ու ընդգծում է իր հերոսի՝ հայրենի հող ու ջրի և վերջինիս վրա ապրող ու բանող աշխատավորության հետ ունեցած սերտ կապն ու մտերմությունը։

Դեռ ծծկեր յերեխա Դավիթը, Մըսրում գերության մեջ յեղած ժամանակ, համառորեն հրաժարվում է ոտար (Մսրա Մելիքի) կնոջ կուրծքն ընդունել։ Նրան սովամահ լինելուց փրկում է միայն Սասունից բերել տված մեղրն ու կարագը, վորը նա ընդունում է մեծ սիրով, մայրական կաթի տեղ.

«Մըսրամելիքի մեր ելավ,
Վիրուց զաղեն, պետք է ծիծ տեր.
Իրիք որ իրիք գիշեր են բան չկերավ,
Ենու ծիծ չծըծից։

. . . . . .

Մըսրամելիքի մեր ճամբեխից,
Եպի մեկ բեռ մեղր, մեկ կարագ.
Մեղրով, կարագով եդա տղեն կիրըցուց,
Պախից մինչիվ իրիք տարի»։

Ա. 165—166

Վերոհիշյալ հատվածում ժողովրդական վիպասանները շեշտել են հայրենի մանդի կենարար հատկությունը և Դավթի՝ Սասունի հետ կապված լինելու հանգամանքը։ Նույն բանի արտահայտությունն են նաև Դավթի (և վեպի մյուս հերոսների) Սասունի աղբյուրների (կաթնաղբյուր և այլն) ջրից հզորանալու պատմությունները։ Մսրա Մելիքի դեմ կռիվ գնալուց առաջ

Դավիթը, ժողովրդի ներկայացուցիչ՝ կորեկի արտի տեր աղքատ պառավի կամ իր ձիու խորհրդով, խմում է իր հոր Կաթնաղբյուրի ջուրը և նոր լեցք ու թափ ստանալով յերևում մարտի.

«Դավիթ լե վեր եկավ,
Են Կաթնաղբրի ճուր՝
Եատու ձիու կողաշար՝ լավացավ։
Ենտեղ ճուր խմավ. խաց կերավ,
Ընկավ վար են Կաթնաղբրին, քնավ։
Մեկ սհաթ քնավ, ելավ, տեսավ,—
Տեսավ՝ ենպեսն ի լցվի,
Ենպեսն ի Խաստացի,
Ենպեսն ի զորություն, վոժ առի,
Վոր չափալամիշ ի եղի»։

Ա. 22

Բացի իր առասպելական հատկությունից, ջուրն այստեղ ունի նաև այլաբանական նշանակություն. դա հայրենի ընդերքի (իմա ժողովրդի) ուժն է, վոր ջրի միջոցով ներարկվելով Դավթին, դարձնում է նրան անխոցելի։

Թե վորքան սերտ և կապված Դավիթն իր հայրենի յերկրի ու ժողովրդի հետ, շատ պերճախոս կերպով յերևում է նրա Մսրա Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ արտասանած հրաժեշտի խոսքերից, վորտեղ նա սրտաշարժ կերպով մի առ մի «մնաս բարով» և ասում թե՛ իր հայրենի «պաղ-պաղ» աղբյուրներին ու քամիներին և թե՛ իր «բարի դրկիցներին», «քույրիկներին» ու «մերիկներին».

«Ծովասարու պաղ-պաղ ախպրներ,
Մնացեք բարով, բարի մնացեք.
Ցես կերթամ կռիվ, կը ծարվնամ՝
Դուք ինձնից կարոտ մընացեք։
Ծովասարու պաղ-պաղ քամիներ,
Մընացեք բարով, բարի մնացեք.
Ցես կերթամ կռիվ, կը շոգնամ,—
Դուք հով մընացեք։
. . . . . .
«Ո՜վ քուրիր, կացեք բարով,
Ընձի քուրութին եք երի,
Ո՜վ մերիր, կացեք բարով,
Ձի մերութին եք երի,
Բարի դրկիցներ, կացեք բարով,
Կացեք բարով մեծ ու պստկով»։

Ա. 194

Սակայն վեպը չի բավականանում Դավթի՝ իր յերկրի ու ժողովրդի հետ ունեցած սերտ կապը նշելով միայն։ Վոչ պակաս ցայտուն ու վառ պատկերներով այստեղ դրսևորվում են նաև այն մեծ սխրագործությունները, վոր կատարում է Դավիթը հանուն իր յերկրի պաշտպանության ու ժողովրդի ազատագրության։ Հիշենք դրանցից մի քանիսը միայն։

Խրատատու պառավից լսելով, թե ինչպես Մելիքի հարկահանները բռնությամբ հավաքել և մարաքն են լցրել Սասունի յոթ տարվա հարկ-թալանը, կանանց ու աղջիկներին, իրենց տիրոջն «արժաղան» տանելու համար, Դավիթն անմիջապես հասնում է դեպքի վայրը, վիրավորում, քշում հարկահաններին և ազատում գերին ու ավարը։

Դավիթ զմբզրախ քաշեց ու ընկավ մեջ,
Եդ զորք ամեն ջարդ ու փուրդ արեց,
Կնիկ, աղջիկ, ալան-թալան՝
Եբեր հետ ասաց.
—Ամեն մարդ գա, իրեն տված վերցու,
Ով ապրանք տվե՝
Թող գա իր ապրանք վերցու,
Ով ոսկի, փող տվե,
Թող գա իր ոսկին վերցու...
. . . . . .
. . . . . .
Ձապրանք, զոսկին, զփող,
Ամեն ցրվեց, եատու ժողովրդին,
Ինք եկավ իր տուն նստավ։

Դավթի զայրույթն ու ցասումը հորդում է հեղեղի պես, յերբ նա լսում է Մսրա Մելիքի՝ Սասունն ավերելու մասին տված սպառնալիքը.

«Մրսրա Մելիք ասքյար կապեց,
Եկավ վեր Սասմա քաղքին։
Մեչ դաշտին զուր չադրը—խեվաթ եղար,
Ջուհար խրկեց Ջենով Հովանին։

Ասաց.—Ձենով Հովան,
Իմ յոթ տարվա խարջ կը տաս՝ տու խաթրով.
Թե չես ի տա, կը գամ, Սասմա քաղաք ավրեմ,
Տանեմ Մսրա քաղքի քամակ, նոր քաղաք շինեմ»։

Ա. 17

Առանց ժամանակ կորցնելու նա դուրս է գալիս Մելիքի դեմ, վոչնչացնում Թշնամուն և ազատում Սասունը նրան սպառնացող մեծ վտանգից.

«Դավիթ ուր խոր ավդ երավ,—
Մըսրամելիք սպանեց, զՍասուն ազատեց»։

Ա. 830

Նույն կերպ Դավիթը վարվում է նաև իր և իր հարազատվի՝ Խանդութ Խանումի հայրենիքի ու ժողովրդի մյուս թշնամիների (Շապուհ արքայի, Բապը Ֆրենկի, Հալաբա թագավորի և մյուսների) հետ։ Ստանալով նրանց մարտահրավեր-նամակն, այն մասին, թե՝

«Կը դաս, արի հետ մեզ կռիվ.
Վոր չես իդա, զորք կը քաշենք՝
Քու երկիրը քար ու քանդ կանենք,
Ինչ կա-չկա, լոպկենք, տանենք»,

Ա. 461

Դավիթը կռվի չե դուրս գալիս և մեկ առ մեկ տեսնում նրանց դատաստանը.

«Դավիթ դարձավ, զարկեց Շապուհին,
Թուր Կայծակով գլուխ կտրեց.

Բ. 402

Ելավ, գնաց մեկ-մեկ բերեց,
Ողան-Տողան թագավորներ,
Կտրեց մեկ-մեկ ենոնց վզներ,
Դրեց ենտեղ»...

Ա. 215

* * *

Հայրենասիրության ու ժողովրդասիրության հետ սերտորեն շաղկապված՝ «Սասունցի Դավթի» մեջ հանդես են գալիս ազգային համերաշխության և խաղաղասիրության գաղափարները։ Ազգային ազատագրական պայքարի բովում ծնված մեր վեպի մեջ չկա ազգային առելություն, մի բան, վոր այնքան բնորոշ է տիրող դասակարգերի հոգևոր ստեղծագործության հուշարձաններին։ Աշխատավոր հայ ժողովուրդը, վոր դարեր շարունակ յենթակա է յեղել ոտար նվաճողների արշավանքներին ու ասպատակությունների, անդադար կոտորվել, կողոպտվել ու գերեվարվել նրանց կողմից, գիտակցել է, վոր այդ արշավանքների ու ասպատակությունների կազմակերպողը յեղել են վոչ թե պարսիկ, արաբ, թուրք և այլ աշխատավորները, այլ նրանց թագավորներն ու իշխանները։ Հայ շինականն ու ռամիկը, ինչպես և առհասարակ աշխատավոր մասսաները, ամենուրեք և միշտ պատերազմի վրա նայել են վորպես աղետի, վորի համար պատասխանատու յեն իշխողները։ Նրանք են, վոր հրահրում ու բորբոքում են ազգամիջյան նվաճողական բոլոր կռիվները։

Հասարակական վերնախավերի (թագավորների ու իշխանների) այդ ձգտումները (պատերազմասիրությունը) շատ ցայտուն կերպով արտահայտված է հայ ժողովրդական հետևյալ իմաստուն առածում. «Յոթ դերվիշ մեկ կապերտի տակ կը սթըրվին, յոթ թագավոր վեր յոթ յերկիր չեն սթրվի»։

Յերբ Դավիթը հարձակվում է Մելիքի բազմամարդ բանակի վրա և աջ ու ձախ սկսում է կոտորել Թշնամու զորքը, արաբական բանակից դուրս է գալիս մի ծերունի զորական և իր իմաստուն խոսքերով աշխատում է համոզել Դավթին՝ վերջ տալ Մելիքի կողմից զոռով կռվի դաշտ բերված անմեղ մարդկանց կոտորածին.

«Մեկ մեծ փիր, ալեվոր կար մեջներ,
Մելիք ենոր յոթ տղեն ել զոռովեն բերել եր կռիվ.
. . . . . .
Վոր Դավիթ ընկավ զորքի մեջ, սկսեց կոտորում,
Եդ մարդ զորքի մեջեն վազեց, եկավ ասաց.
—Դավիթ, մատաղ եմ քու գլխուն,
Դու ինչի՞ ես մարդեր կը սպանես,
Քու դուշման գո են դաշտի մեջ՝
Ձաղբը զարկե, նստեր ե,
Են ջոջ չաղբը տես ենորն ե։
Եդ զորք Մելիք զոռովեն ե բերե,
Շատեր կան, մորեն մեկ են.
Վոր կա՝ թագա փեսա յե,
Վոր կա՝ ինք մենակ ե, վոչ տղա ունի, վոչ աղջիկ,
Մե կնիկ կա՝ թոզե տուն քաղցած եկե,

Եդ շիվարներու մեղաց տակ մի մընի.
Վոր դու կորիճ ես՝ գնա Մելիքի հետ կռիվ արա»։
Ա. 25, 199, 43

Իբրեվ ժողովրդի հարազատ զավակ, վորի համար թանգ է աշխատավորների կյանքը, անկախ այն բանից, թե ինչ ազգության են պատկանում նրանք, Դավիթը սիրով ունկնդրում է արաբ ծերունու խոսքերը և դառնալով նրան ասում.

«—Հալեվոր, դու աղեկ բան ասացիր,
Քու խոսք տ'ենիմ»։

Յեվ Դավիթը կատարում է արաբ աշխատավորության ներկայացուցիչ ծերունի զորականի խորհուրդը։ Նա անմիջապես ընդհատում է կոտորածը և դիմելով դեպի Մելիքի վրանը, իր վեճը լուծում է մենամարտի յելնելով և սպանելով նրան։ Մելիքին սպանելուց հետո Դավիթը դառնում է դեպի նրա զորքը և ժողովրդական հերոսին վայել խաղաղասիրական խոսքերով ճանապարհ է դնում նրանց իրենց տները.

«Դավիթ ձիու գլուխ կը դարձուցի,
Կերթա զորքի մեջ, կասի,
—Ձեզ ամենուդ իզին տվի.
Մեկ-մեկ ձեր տներ գնացեք,
Իմ ջանին աղոթք երեք,
Իմ խոր-ժորն ել ողորմի տվեք»։
Ա. 436.

Արաբ զորականի իմաստուն խոսքերը մի տեսակ պատգամի դեր են խաղում Դավթի համար։ Իր հետագա կռիվներում ևս նա հավատարիմ է մնում այդ պատգամին և կիրառում այն կյանքում։

Այսպես որինակ, յերբ Դավթի վրա արշավանքի յելած Բապը Ֆրենկիի հսկայական բանակը, տեսնելով նրա ահռելի ուժը, փախուստի յե դիմում, Դավիթը համոզում է իր առջևից փախչող թշնամու զորքերին՝ կանգ առնել և ցույց տալ իրեն իրենց թագավորի տեղը, ասելով, վոր ինքը մտադիր չե նրանց սպանելու և վոր իր հաշիվը նրանց թագավորի հետ է.

«Դավիթ կանչեց.—դու մի փախնեք,
Ձեր թագավորի տեղ ինձի ասեք»։
Ա. 464

Յեվ յերբ արաբական բանակից հայտնում են, վոր իրենց թագավոր՝ Բապը Ֆրենկին հանգիստ նստած է իր քաղաքում, Դավիթը պատերազմի դաշտ է կանչել տալիս նրան, տեղն ու տեղը սպանում է, դառնալով դեպի իր թշնամու զորքն ու ժողովուրդը, ասում.

«—Քանի դու ժիր եք, կռիվ մեք երթա»։
Ա. 465

Միաժամանակ Դավիթը պատվիրում է նրանց՝ նեղն ընկնելու դեպքում իրեն ոգնության կանչել.

«Վոր դու նեղ կընկնեք,
Ինձի թուղթ գրեք, ճամբեք, յես կը գամ»։
(Նույն տեղ)

Ահա թե ինչպես է աշխատավոր հայ ժողովուրդը իր վեպի մի նրա գլխավոր հերոսի միջոցով դրսևորել իրեն համար այնքան թանգ ազգային համերաշխության և խաղաղասիրության գաղափարները։

* * *

Դեպի սեփական հայրենիքն ու ժողովուրդն ունեցած անսահման նվիրվածության և ազգային համերաշխության ու խաղաղասիրության իրենց վառ ձգտումների համար «Սասունցի Դավթի» հերոսները, մասնավորապես՝ Դավիթը, ջերմորեն սիրված են աշխատավոր ժողովրդի կողմից։ Իրենց պայքարի մեջ նրանք գտնում են աշխատավորության լրիվ պաշտպանությունն ու ոժանդակությունը։ Հանձին կորեկի արտի տեր պառավ կնոջ, ժողովուրդը բոլոր դժվարին ու ճակատագրական մոմենտներին ոգնության է հասնում Դավթին։ Իր իմաստուն խորհուրդներով ու հորդորներով պառավ կինը ընթացք է տալիս նրա տարերային ֆիզիկական ուժին։ Նա յե առաջին անգամ հայտնում Դավթին Մսրա Մելիքի հարկահանների գալստյան լուրը, նա յե սովորեցնում Դավթին իր հոր զենքերի տեղը ... Ժողովուրդը ուշի ուշով հետևում է Դավթի և մյուս հերոսների ամեն մի քայլին, սրտանց ուրախանում ու վոգեվորվում նրանց հաջողություններով և մտահոգվում ու տխրում նրանց առաջ ծառացած դժվարությունների կամ պատահած դժբախտությունների ժամանակ։

Այսպես, որինակ, յերբ Մըսրում ապրող ջուլհակները լսում են, վոր Մելիքը մտադիր է սպանել Մեծ Մհերի վորդիներին,

Դավթին ու Մանուկին, անմիջապես հավաքվում են, ժողով անում և թուղթ ուղարկում Քեռի Թորոսին, վորպեսզի նա շտապի ոգնության հասնելու վերահաս վտանգի առջև կանգնած իր ազգականներին.

«Քանի մը տուն ջուլհակ կար Մըսրա մեջ.
. . . . . .
Եղոնք լսին եդ ձեն, ձուն,
Թե Քեռի Թորոսի ճժեր պըղի սպանին.
Հելան ուրանք ժողով երեցին,
Թուխտ մի գրեցին Քեռի Թորոսին,
Տվին ջահել տղի մի ձեռ, և ըսին.
—Կերթաս Սասուն, կիդաս Քեռի Թորոսին.
Հիրկուն հասնիս, հիրկուն դա,
Լուսուն հասնիս, լուսուն դա»։ Բ. 273—74

Թորոսը ստանալով ջուլհակների նամակը, շտապում է Մըսր և ազատում Մհերի վորդիներին։

Մի այլ տեղ Խանդութ Խանումի զոնապան Գորգիզը, նկատելով իր տիրուհու ուղնկան քառասուն փահլեվանների (կամ յոթ թագավորազների) կողմից՝ հարբած Դավթի դեմ սարքվող դավադրությունը, զգուշացնում է նրան այդ մասին.

«Յոթ թագավորի տղեկներ
Թրեր քաշին ու կայնան,
Ու պըղի զարկեն թրով Դավթին։
Քավոր Գորգիզ զոնից կանչեց.
— Սան՛եր Դավիթ, սան՛եր Դավիթ,
Եդի հարանքի տուն չէ, մահտուն է,
Ճանճ գլխուցդ ի վերեվով կընցնի, գլուխ թռու»։
Բ. 83

Յեվ Դավիթը լսելով Գորգիզի ձայնը, ուշքի յե գալիս ու հարածում թշնամիներին.

«Դավիթ հեշրցավ, թուր քաշեց ու թռավ, կայնավ.
Ու իդոնք Դավթի ահուց փախան»։
Բ. 83

Ժողովրդի խոր սերը դեպի իր հերոսները, բացի վերը բերված և բազմաթիվ այլ առարկայական արտահայտություններից, ունի նաև իր վոչ պակաս ցայտուն բարոյական արտահայտությունները։

Բերենք մի քանի ընորոշ նմուշներ։

Յերբ Դավիթն իր հրեղեն ձին նստած պատրաստվում է գնալ Մելիքի դեմ կռվելու, Սասնո հարսները գալիս են նրա առաջ և յերգով բարի ճանապարհ մաղթում.

«Երթալ քեզ չըլի,
Դառնալ քեզ ըլի,
Դառնալ քեզ ըլի,
Երթալ քեզ չըլի
Մեր ախպեր Դավիթ . . .»
Բ. 1033.

Լսելով Դավթի հաղթական վերադարձի լուրը, Սասունի վողջ ժողովուրդը, վոր սրատարոի սպասում եր նրա գալստյանը, Ջենով Հովանի առաջնորդությամբ գնում է նրան գրկաբաց դիմավորելու.

«Հովանին ասին.— Դավիթ եկավ։
Հովան ելավ, տի երթա Դավթի առաջ։
Են գեղական՝ մարդ, կնիկ, հալվոր,
Պառավ, ճիժ-պիժ,
Ամեն գնացին Դավթի առաջ»։
Ա. 438

Իրենց նախնի և հայրենիքի հիմնադիր՝ Աբամելիքի (=Սասնասար) մահվան լուրը լսելով, սասունցիք յոթ տարի շարունակ սուգ են կապում նրա հետևից.

«Յոթ տարի Սասուն սուգ մնաց
Աբամելիքի մեռնելուց ետև»։
Բ. 18

Նույն կերպ նրանք սգում են նաև Սասունը սովից և Մեծ Մելիքի հարկից ազատող Աստուծաձև Մհերի մահվանից հետո.

«Մհեր դարձավ, գնաց ուր տուն,
Տարավ ուր ձեռնով թուր զարկեց Կպրե կարասի մեջ,
Կսկըծվորավ, կսկիծ տվեց ուր սիրտ ու ենտեղ մեռավ։
Սասունցիք Քեռի Թորոսին
Բերեցին, դրեցին ուրանց մեծ։
Յոթ տարի սուգ կապեցին Մհերի հետև»։
Բ. 62—63

Թե վորքան խորն ու անկեղծ է Սասունցոց կսկիծը, յերևում է այն փաստից, վոր նրանք յոթ տարի շարունակ չեն ամուսնացնում իրենց աղջիկներին ու տղաներին և պատրաստ

են յոթ տարի ես սուգ պահել, յեթե իմանան, վոր Աբամելիքը կարող ե կենդանանալ.

«Գեղացիք ասեցին.— Քեռի Թորոս,
Մըր տղեկներ հալվորան,
Ու մըր աղջըկտիք պառվան.
Թը դու գինաս, թը մըր յոթ տարի սուգ պահելով
Մըր Աբամելիք կը սաղնա,
Յոթ լե ավլի կը պահենք».

Բ. 18

Պակաս անկեղծ և հուզիչ չե նաև Շապի-արքան թագավորի քաղաքում բնակվող Սասունցի Ջուլհակի սուգը՝ Շապուհի կողմից դավադրաբար հորը նետված Փոքր Մհերի մասին, վորին հանդիպում ե ինքը, հորից ազատված Մհերը, Շապուհի քաղաքում ծպտված շրջելիս.

«Եդ տեղեն ելավ (Մհեր), եկավ քաղքի մեջ։
Եկավ, տեսավ, վոր մեկ ջուլակ հինած կեներ.
Հինած կեներ ու կիլեր։
Հինածի կես սեվ եր, կես սիվտակ եր։
Ու հարցուց թե,—հոբի մեկ սև կը հինիս, մեկ սիվտակ
Ու կիլաս հետ։
Գործըրար ըսեց.— Ցես Սասունայ իմ.
Մհերին բռնեցին, թալին հորու մեջ,
Են արով մեկ սև կը հինիմ, մեկ սիվտակ
Ու կիլամ»։

Բ. 99

Այսպես տարբեր ձևերով ու յերանգներով «Սասունցի Դավթի» մեջ դրսևորվում ե աշխատավոր ժողովրդի անմիջական ու խոր սերը դեպի իր հույսերի ու հույզերի կրող հերոսները։

* * *

«Սասունցի Դավթի», ինչպես և առհասարակ հայ ժողովրդական բանահյուսության, հիմնական ու կարևոր մոտիվներից են նաև՝ աշխատավոր ժողովրդի ձգտումը դեպի ազատությունը, նրա լավատեսությունը կապված իր անսահման ուժի նկատմամբ ունեցած վստահության գիտակցության հետ։

Առաջին մոտիվի լավագույն որինակը վեպում հանդիսանում ե Դավիթը։ Իր վոգի կյանքով ու գործով (հերոսամարտերով ու սխրագործություններով) նա ձգտում ե դեպի ազատությունը և ծառայում դրան։ Առանձնապես ցայտուն ու բնորոշ ե այս տեսակետից Մսրա Մելիքի տանը գերության մեջ գտնվող մանուկ Դավթի «յելույթը»։ Յերբ Քեռի Թորոսը առաջարկում ե Դավթին անց կենալ Մելիքի թրի տակով, վորպեսզի նա համաձայնվի ազատելու իրեն գերությունից, մանուկ Դավիթը համառորեն հրաժարվում ե կատարել Մելիքի կամքը, ասելով.

«Կը սպանե, թող ըսոր սպանե,
Ցես ընդրա թրի տակով չըմ ընցնա.
Հըմալ կենե, որ վաղ յես մեծնամ.
Սուր չքաշիմ ուր վըրեն»։ Բ. 19

Յերկրորդ մոտիվի (ժողովրդի իր անսահման ուժի մասին ունեցած վստահության) բազմաթիվ արտահայտություններից ամենափայլունը «Սասունցի Դավթի» մեջ հետևյալն ե։ Յերբ Զեռնով Հովանը, տեսնելով թշնամու (Ամշկիկ Սուլթանի) բանակի ուժը, սրդողելով մի պահ դժվարանում ե ընտրել իրեն պայքարի ճակատը, Մհերը նախատում ե նրան ասելով.

«Հրոխպեր, բա մենք Սասնա տնեն չենք,
Չե մենք Սասնա տնեն ենք.
Մենք մեռնենք, մեր գերեզմանի վրա
Թագավորներ չեն կարնա գա.
Քշի, երթանք, մեր կռիվն անենք»։

Բ. 44

* * *

«Սասունցի Դավթի» մեջ վիպական բնորոշ գծերով արտահայտված ե միջնադարյան Հայաստանի (և վոչ միայն միջնադարյան) սոցիալ-տնտեսական կյանքի իրական պատկերը՝ իշխող դասերի և աշխատավոր ժողովրդի փոխհարաբերությունների ճշմարտապատում նկարագիրը։ Վեպի տարբեր պատումներում մենք գտնում ենք բավական նյութ հասարակության շերտավորման՝ դասային առանձնահատկությունների, ազնվականության արտոնությունների և ռամիկ ժողովրդի ծանր վիճակի մասին։ «Սասունցի Դավթի» մեջ հիշված իշխող դասակարգերի ներկայացուցիչները (թագավոր, իշխան, ռես, վարդապետ, քահանա և այլն) իրենց կեցությամբ և սոցիալական եությամբ հակադրվում են վեպում յերևան յեկող աշխատավորության ներկայացուցիչներին (արտատեր աղքատ պառավ, գութանավորներ, ջուլ-

հակ և այլն)։ Մինչդեռ առաջինները վայելում են ուրիշի աշխատանքի արդյունքը՝ շահագործելով ու կեղեքելով, վերջինները ապրում են դժվարին և չարքաշ կյանքով, որն ի բուն աշխատելով և բնության տարերքի դեմ կռվելով։ Հասարակական հիշյալ յերկու բանակների հակադրությունը շատ ցայտուն կերպով արտահայտված է՝ Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի կերպարների մեջ։ Դավիթը վեպում յերևան է գալիս իբրև մի տքնաջան աշխատավոր և շինարար մարդ։ Մանկուցից նա սկսում է աշխատել՝ նախ իբրև գառնարած, ապա հորթարած, հետո նախրորդ կամ վորսորդ։ Դավիթը սիրում է աշխատանքը չնայած դրա դժվարություններին։ Յերբ Զենով Հովանը առաջարկում է նրան պարապ չմնալու համար հանձն առնել գյուղի նախրորդի պաշտոնը, Դավիթը սիրով ընդունում է այն։ Իսկ պատումներից մի յերկուսում, նկատելով իրենց ընտանիքի նյութական ծանր պայմանները, Դավիթն ինքն է առաջարկում Քեռի Թորոսին՝ իրեն և տան մյուս յերեխաներին աշխատանքի դնել.

«Եղ տարին դարուն թաժա բացվեր ա.
Դավիթ ասեց.—Քեռի, դարուն ա.
Հոդախ, մըշկու վախտ ա, բոբնչպերու վախտ ա,
Մենք քառասուն ջանով լըցվեր ինք իդա տուն,
Ամ, դու պարտադան չէս, մըզի զըմեն պայիս։
Հելի, մըզի տուր հորթարած, նախրորդ, հովիվ, մշակ,
Դատինք, աշունք բերինք մըր աշխատանք,
Քոմմինք վիրարու, ուդինք, ապրինք»։

Բ. 275

Բնորոշ են նաև Դավթին իբրև շինարար հերոսի բնութագրող փաստերը (տես՝ Մարութա վանքի վերաշինումը, սասունցոց համար կամուրջ կառուցելը և այլն)։

Բոլորովին այլ բնութագիր ունի վեպում Մսրա Մելիքը։ Իբրև իշխող դասակարգի ներկայացուցիչ, նա հեռու յե աշխատանքից և վայելում է ուրիշի վաստակի պտուղները։ Հակառակ Դավթին, Մելիքը յերևան է գալիս իբրև մի բռնակալ—տիրան, վոր հարկահաններ է ուղարկում Սասուն՝ յոթ տարվա հարկը բերելու, կարգադրում իր ստորադրյալներին գնալ և ավերել սասունցոց սրբատեղին, կամ զորահավաք հայտարարելով՝ պատերազմի յե դուրս գալիս իր հարկապահանջության լուծը թոթափելու փորձ անող սասունցիների դեմ։ Ահա այն «աշխատանքները», վոր կատարում և վեպում Մելիքը։ Այդ «աշխատանքների» մեջ կարևոր տեղ է բռնում նաև նրա յոթորյա քունը, վոր վիպական բնորոշ գծերով է նկարագրված մի շարք պատումներում.

«Դավիթ քշեց իր ձին, գընաց,
Մելքի վրանի դուռ կայնավ.
Տեսավ՝ Մելիք իր չադրի տակ,
Մեջ վերմակին կոլոնված՝ պառկե։
Յոթ աղջիկ ենոր չորս դին նստե՝ ճանճ կըքշեն,
Յոթ աղջիկ իր վոտ կը մաժեն,
Երկու արաբ ծառայող ել դռան կանգնած»։

Ա. 431

Դավթի և Մելիքի նման՝ հասարակական տարբեր բանակների ներկայացուցիչներ են նաև վեպի մյուս գլխավոր և յերկրորդական գործող անձերը—Սանասարն ու բաղդասարը, Առյուծաձև Մհերը, Փոքր Մհերը մի կողմից, և Բաղդադի խալիֆան, Բապը Ֆրենկին, Շապուհ արքան և այլն մյուս կողմից։ Մինչդեռ առաջինները վեպում ցույց են տրված իբրև գործի մարդիկ, աշխատանք սիրողներ (Սանասարն ու Բաղդասարը սեփական ձեռքերով կառուցում են վոչ միայն իրենց բերդ-բնակարանը, այլև քառասուն տուն աղքատների համար, Առյուծաձև Մհերը զբաղվում է վորսորդությամբ և յոթ տարի վորսով կերակրում սասունցիներին, Փոքր Մհերը մերթ հանդես է գալիս իբրև քահանայի մշակ, մերթ իբրև զինվոր, մերթ իբրև քառասուն փահլևան յեղբայրների համար հաց թխող և այլն և այլն), վերջինները՝ շահագործող, բռնակալ, անաշխատ ու պատերազմասեր մարդիկ են։ Բաղդադի խալիֆան Մսրա Մելիքի նման պարբերաբար արշավանքներ և կազմակերպում Հայաստանի վրա՝ ժողովրդին հարկադրելու ու կողոպտելու նպատակով, Շապուհ արքան և Բապը Ֆրենկին Խանդութին տիրանալու նպատակով Դավթի դեմ պատերազմի դաշտ են դուրս բերում իրենց յերկրի աշխատավոր ժողովրդին և կոտորել տալիս նրանց և այլն։

Պակաս բնորոշ չեն այս տեսակետից և վեպի դավթյան ճյուղի մի շարք պատումներում յերևան յեկող՝ Գործոթա ռեսի և կորեկի արտատեր պառավի տիպերը։ Մեկն իբրև շահագործող—տանաշխատ դասակարգի ներկայացուցիչ, վորն ունի մեծ քանակությամբ հող, վորի վրա աշխատում է վոչ թե ինքը, այլ նրա վարձու մշակները, մյուսն իբրև գյուղական չքավորության ներկայացուցիչ, վոր սեփական ձեռքերով մշակում է իր

փոքրիկ հողամասը (կորեկի կամ շաղգամի արտը), հազիվ հաղ կարողանալով հայթայթել իր ընտանիքի գոյության պահպանման համար անհրաժեշտ ապրուստի միջոցները։

Աշխարհիկ շահագործողների հետ «Սասունցի Դավթի» մեջ հանդես են գալիս նաև հոգևոր տերերը։ Իրենց սոցիալական էությամբ դրանք շատ քիչ են տարբերվում առաջիններից։ Իրենց շահերով, աշխարհիկ շահագործողների նման, դրանք հակադրվում են աշխատավորությանը և նրա սիրելի հերոսներին։ Այս տեսակետից ընորոշ են Մարութա վանքի միաբաններից՝ Ոհան Աղբակեցու և Սասունի ճանապարհին գտնվող Մատղավանքի վանահոր տիպերը։

Առաջինն իբրև մի կաշառակեր անձնավորություն, վոր խաբվելով Ղոզբադնի խոստումներից անցնում է նրա կողմը և ծախում յուրայիններին, իսկ յերկրորդն իբրև մի դավաճան, վոր դավադրաբար թշնամիների ձեռքն է մատնում Փոքր Մհերին։

Սակայն, վեպը չի բավականանում միայն հասարակական տարբեր դասակարգերի ներկայացուցիչների բնութագիրը տալով և նրանց գործունեության պասսիվ նկարագրով։ Նա, բավական ընորոշ գծերով հակադրելով դրանց իրար, տալիս է այն պայքարը, վոր մղում է աշխատավորությունը աշխարհիկ ու հոգևոր շահագործողների դեմ։

«Սասունցի Դավթի» հերոսների համար հավասարապես ատելի յեն բոլոր տիպի շահագործողները, անկախ նրանց տեսակից ու ազգությունից, և ընդհակառակը սիրելի յե աշխատավորությունը՝ ինչ ազգից ել լինի դա։ Այդ է պատճառն ահա, վոր նրանք կռվելով այլազգի ոտար շահագործողների դեմ, միաժամանակ կռվում են նաև սեփական շահագործողների դեմ, և ընդհակառակը՝ պաշտպանելով ու հովանավորելով յուրայիններին, պաշտպանում ու հովանավորում են նաև այլ ազգի աշխատավորներին։

Այսպես որինակ, մի տեղ Դավիթը Բապը Ֆրենկին սպանելուց հետո, սպանում է նաև նրա քաղաքի «Ջոջ» մարդկանց և նրանց տեղը «պստիկներին» նշանակում.

«Մնացողը, քաղքի մեջ վոր մնացել է,
Դավիթ ենոնց խամար թագավոր կը դնի.
Ջաթի Ջոջ մարդեր կը սպանի,
Պստիկներ տեղ կը դնի»։

Ա. 465

«Ջոջ» և «պստիկ» բառերի տակ վեպն այստեղ անշուշտ նկատի ունի հասարակության վերին և ստորին խավերի ներկայացուցիչներին։ Մի այլ տեղ Փոքր Մհերը կռվելով Շապուհ արքայի դեմ և սպանելով, նրա փոխարեն թագավոր է կարգում սասունցի չքավոր Ջուլհակին.

«Ու զարկեց, Շաբի-արքանի գլուխ կտրեց։
Եդ տեղին դնաց, հորու վրին կայնավ.
Պառավն ու ուր յոթ ախչիկ հորու միջին հանեց,
Բերեց գործըրարի կուշտ.
Առավ գործըրար լե հետ,
Եկավ Շաբի-արքանի դիվան։
Պառվու պստիկ ախչիկ տվեց Ջուլակին,
Ու Ջուլակ դրեց թագավոր Շաբի-արքանի տեղ»։

Բ. 100

Վոչ պակաս ցայտուն են նաև այն դատաստանները, վոր կատարում են Դավիթն ու Մհերը վերևում հիշված դավաճան և կաշառակեր վանականների նկատմամբ։ Ահա թե ինչ է պատմում վեպն այդ մասին։

«Ղոզբադինը վանքը կողոպտում է և միաբաններին կոտրում. միայն մի սարկավագ ազատվելով՝ փախչում է Դավթին պատմելու յեղելությունը։ Դավիթը կեր ու խում ուներ, յերբ սարկավագը ներս է մտնում.

«Դավիթ նստի հացն ու գինին,
Եկան խաբին Ոհան Աղբակեցին,
Քառասուն երեց սպանեցին,
Քառասուն վարդապետ, քառասուն սարգավաք»։

Դավիթը, լսելով սարկավագի խոսքերը, իսկույն վազում է թշնամիների հետևից, Ոհան Աղբակեցուն յերկու կտոր է անում, իսկ Ղոզբադնին, ատամները ճակատին շարելով, ուղարկում է Մսրա Մելիքին . . .»։

Բ. 72

Դավթից հետ չի մնում և Մհերը։ Մատղավանքի վանահոր հրավերով վանքը պաշարած Դավթի թշնամի յոթ թագավորների զորքի հետ իր հաշիվը վերջացնելուց հետո, նա գալիս է վանք և՝

«Մեկ ձեռքով վերուց վանքի սուն,
Մեկելով բռնեց վանահոր բուչմից,
Գլուխ դրեց սան տակ,

Ուն թողուց վեր գլխուն, ասաց.
— Ես վանքի անուն ըստուց յետ՝
Մատղավանք չպիտի ըլնի,
Մատնավանք պիտի ըլնի,
Զունքի որ վանահեր մատնութեն երեց»։

Բ. 871

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ «Սասունցի Դավիթի» մեջ սոցիալական պայքարն ընդհանրապես և աշխատավորության՝ իր ներքին շահագործողների դեմ մղած սոցիալական պայքարը մասնավորաբար համեմատաբար քիչ ու թույլ է արտահայտված։ Ցեվ դա ունի իր խորը պատճառները։ Այն շրջանում (7—10 դարերը), յերբ ստեղծվել ու ձևավորվել է վեպը, հայ ժողովրդի հիմնական ուշադրությունն ու վողջ ուժը կենտրոնացած է յեղել արտաքին նվաճողների (արաբական խալիֆաթ) դեմ մղած ազգային ազատագրական պայքարի ճակատում, մի ճակատ, որտեղ ժողովրդի հետ, սակայն բոլորովին տարբեր դասակարգային միտումներով, ընդհանուր ֆրոնտով պայքարել է նաև հայ ազնվականությունը։ Ահա թե ինչու, մեր կարծիքով, «Սասունցի Դավիթը», իբրև հայ ժողովրդի պատմական կյանքի հիշյալ շրջանի կենդանի վավերագիր՝ համեմատաբար թույլ է՝ արտացոլել հայ աշխատավորության դասակարգային պայքարն իր ներքին տերերի դեմ և, ընդհակառակը, այնքան վառ ու գունեղ է պատկերել նրա ազգային ազատագրական պայքարը ոտար նվաճողների դեմ։

6.

Պատմական իրադարձությունների, ժողովրդի գաղափարների, ձգտումների ու սոցիալական կյանքի գեղարվեստական վերարտադրության հետ, «Սասունցի Դավիթի» մեջ մենք գտնում ենք նաև աշխատավոր ժողովրդի (շինական և ռամիկ դասի) աշխատանքային-արտադրական կյանքի, կենցաղի, սովորությունների և հավատալիքների բավական մանրամասն նկարագիրը։

Աշխատանքային-արտադրական կյանք։ Իբրև ժողովրդի գլխավոր զբաղմունք «Սասունցի Դավիթի» մեջ յերևան է գալիս նախ և առաջ անասնապահությունը։ Դա յե, ըստ վեպի, Սասունի և՛ գյուղացոց և՛ քաղաքի բնակչության պարապմունքի հիմնական առարկան։ «Մեր երկիրն վար ու ցանք չունինք, մենք եզ ու եշ ու ջորի կը պահենք. մեր հաց Հալապա ու Շամա գուքա»

(Բ. 145), ասում է վեպի գործող անձերից մեկը մի առթիվ։ Վեպի կենտրոնական դեմքը՝ Դավիթը, բոլոր պատումներում հանդես է գալիս վորպես գառնարած, հորթարած կամ նախրորդ։ Նա պահում, արածացնում է իր հայրենակիցների նախիրը։ Սասունցոց անասնապահ լինելու մասին հիշատակություններ կան նաև վեպի մյուս ճյուղերում։

Սասունի աշխատավոր գյուղացիության զբաղմունքի յերկրորդ կարևոր առարկան, որ արձագանք է գտել վեպում, դա վորսորդությունն է։ Վորսով են պարապում եպոսի գլխավոր հերոսները՝ Սանասարն ու Բաղդասարը, Մեծ Մհերը, Դավիթը և այլն։ Վորսորդությունը նրանց համար նախ և առաջ ապրուստի և հագուստի միջոց է։ Ըստ մի յերկու պատումների՝ Մեծ Մհերը վորսով յոթ տարի շարունակ կերակրում է Սասունը.

«Մհեր կը բերեր իր վորս՝
Սասունցոց վերեն կը ցրվեր.
Յոթ տարի Սասուն պահեց վորսով»։

Իբրև վորսի գլխավոր կենդանիներ հիշվում են՝ նապաստակ, աղվես, կուզ և այլն, վորոնց վորսալու սովորությունը Դավթի ժամանակից է մնում.

«Դավիթ լպստրակներ, աղվիսներ, կուզեր
Ծողվից, առից, խպի, ելից մանչ քաղքին։
Քաղքցիք ելան չոկեցին ուրանց գառներ, տարան։
Ամեն մեկ ինչքանդար կպեր,
Լպստրակ, աղվիս, կուզ՝ տարան խիտ։
Լպստրակ զինիցին խետ ուլիրուն, կերան.
Աղվիս, կուզ երին քուրք, խագան,—
Են վրխտեն լպստրակն ել չուր մկա ել
Հա կը զինին, հա կուտին.
Աղվիս, կուզ կենին քուրք՝ խագնին»։

Ա. 179

Անասնապահության և վորսորդության հետ «Սասունցի Դավիթի» մեջ ուղղակի և անուղղակի տվյալներ կան նաև գյուղատնտեսության մի քանի այլ ճյուղերի (յերկրագործություն, այգեգործություն և այլն) վերաբերյալ։ Դավթի ճյուղի համարյա բոլոր պատումներում հիշվում է կորեկի կամ շաղգամի մշակության մասին (տես կորեկի կամ շաղգամի արտի տեր աղքատ պառավի կամ հալեվորի հատվածը)։ Նույն ճյուղի մի քանի այլ

պատումներում հիշվում է ցորենի և այլնի մշակության մասին» (տես՝ Գործոթա ռեսի և նրա գութանավորների հատվածը)։

«Սասունցի Դավթի» տարբեր ճյուղերում մենք հիշատակություններ ենք գտնում նաև արհեստների վերաբերյալ։ «Փոքր Մհեր» ճյուղի մի շարք պատումներում, օրինակ, յերևան են գալիս Մըսրում ապրող սասունցի ջուլհակներ, մի յերկու տեղ կան դարբիններ և այլն։

Ինչպես գյուղատնտեսության, նույնպես և արհեստների մասին յեղած վերոհիշյալ և բազմաթիվ այլ տեղեկություններ լիովին համապատասխանում են առհասարակ հայ աշխատավոր գյուղացիության և մասնավորապես սասունցոց աշխատանքային-արտադրական կյանքին։

Այսպես, յեթե վորսորդությունը, կորեկի և շաղդամի ու այլ մշակույթները բնորոշ են սասունցոց համար, ապա անասնապահությունը, ցորենի և այլ հացահատիկների մշակույթը հատուկ է յեղել Հայաստանի շատ շրջաններին։ Տարածված լինելով բազմաթիվ վայրերում, «Սասունցի Դավիթը» ժամանակի ընթացքում իր մեջ է առել այդ վայրերի ազգաբնակության աշխատանքային-արտադրական կյանքի շատ գծեր։

Կենցաղ, սովորություններ ու հավատալիքներ. — «Սասունցի Դավթի» մեջ շատ բնորոշ գծերով յերևան է գալիս նաև ժողովրդի (աշխատավոր գյուղացիության) կենցաղը, նրա սովորությունները ու հավատալիքները (ծնունդ, մանկություն, նշանդրեք, ամուսնություն, հարսանիք, մահ, թաղում, ուխտագնացություն, սրբերի պաշտամունք, «ցասման ժամ» և այլն)[1]։

Վիպական առասպելական մոտիվներ. — Ունենալով բուն պատմական հիմք ու ատաղձ, «Սասունցի Դավիթը», ժամանակի ընթացքում սերունդից սերունդ բանավոր ավանդվելով, իր մեջ է առել բազմաթիվ հեքիաթային, վիպական և առասպելական մոտիվներ։ Այդ մոտիվների մի զգալի մասը վեպի մեջ մուտք է գործել հայ ժողովրդական առասպելներից ու հեքիաթներից, մյուս մասը՝ հարևան ժողովրդների ֆոլկլորից։ Դրանց շարքին են պատկանում, օրինակ, հերոսների ջրային ծնունդը, կռիվը վիշապների ու դևերի դեմ, դերբնական հղորացումը, քարայրներում փակվելը և այլն և այլն[2]։

[1], [2]) Տես՝ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական Հանդես» գիրք XIV, եջ 51—57, գիրք XVI, եջ 103—117, գիրք XVII, եջ 5—36։

«Սասունցի Դավթի» արտահայտչական միջոցները (լեզու, ոճ, պատկերներ, վոտանավոր և այլն) վերցված են հայ ժողովրդական բանահյուսության բազմադարյան հարուստ գանձարանից։ Դրանք հարազատորեն վերարտադրում են վեպի հերոսական-դյուցազնական եյությունը և ժողովրդական-աշխատավորական վոգին։

«Սասունցի Դավիթը» ստեղծվել և դարերի ընթացքում պատմվել և աշխատավորական խավերին հասկանալի, նրանց հարազատ կենդանի խոսակցական լեզվով, ժողովրդական բարբառներով։

Վեպի ներկայումս մեր ձեռքի տակ յեղած տպագրված ու անտիպ պատումները (թվով 50 հատ) իրենց լեզվական-բարբառային առանձնահատկություններով բաժանվում են չորս հիմնական խմբերի՝

ա) Վանա բարբառով ու յենթաբարբառներով (Մոկաց, Շատախի, Նարեկի, Կաճեթի և այլն) պատումներ։

բ) Տարոնի—Մշու բարբառով ու յենթաբարբառներով (Սասուն, Խլաթ, Ալաշկերտ, Ապարան, Նոր-Բայազետ և այլն) պատումներ։

գ) Պարսկահայոց բարբառով պատումներ և

դ) Արևելահայ բարբառով պատումներ։

«Սասունցի Դավթի» լեզուն իբրև ժողովրդական լեզու ահռելի է, ազատ և շարժուն, լիարյուն ու ճկուն։ Նա համեմված է ժողովրդական սրամիտ ու դիպուկ առածներով ու ասացվածքներով, անեծքներով ու որհնանքներով, վորոնք հագեցված են կենցաղային, սոցիալական խորը բովանդակությամբ։ Այդ առածների ու ասացվածքների, անեծքների ու որհնանքների միջոցով մեր վիպասաններն արտահայտում են իրենց դրական կամ բացասական վերաբերմունքը վեպի գործող անձանց նկատմամբ, տալիս վերջիններիս բնութագիրն ու գնահատականը։ Այսպես, օրինակ, բացահայտելու համար նահապետական ընտանիքի ներսում գոյություն ունեցող կնոջ և մարդու փոխհարաբերությունը՝ կնոջ խոնարհ և համեստ, իր ամուսնուն հլու հնազանդ վիճակը, վիպասաններից մեկը գործ է ածում՝ «տղամարդ վոր կա՝ գլուխ է. կնիկ վոր կա՝ վոտ է» ժողովրդական տարածված առածը։ Մեկ ուրիշ վիպասան Խանդութ Խանումի արիությունն ու ուժը

բնորոշելիս հիշում է՝ «Շեր շեր ա, չը ժը՛ն ա չը մեր ա» (Առյուծն առյուծ է՝ եղ, թե վորձ) քրդական հայտնի առածը։ Մի յերրորդը, գութանավորների բերանով Դավթին բարի ճանապարհ մաղթելիս, ժողովրդական վողջերթ-որհնանքի հետևյալ ընդունված բանաձևն է ուղղում նրան՝ «վորտեղ վոր կերթաս, քու վոտ քարին չը դիպնի» և այսպես շարունակ։ Պակաս գունեղ ու բնորոշ չեն նաև «Սասունցի Դավթի» մեջ գործածված ժողովրդական մակդիրներն ու ածականները։ Դրանք պատկերավոր ու գեղեցիկ բնութագրում են վեպում յերևան յեկող մարդկանց իրերի և առարկաների արտաքին ու ներքին հատկանիշները։ Այսպես, որինակ, Դավթի հորեղբայրներից մեկը ունի «Ձենով» մակդիրը, վորովհետև ոժտված է անսովոր բարձր ձայնով, մյուսին զարդարում է «Ցռան» ածականը—նրա ծայրահեղ վախկոտության համար։ Դավթի քեռին (Թորոսը) մի շարք պատումներում հիշվում է Թևաթորոս ձևով, «Թևան» նրա մակդիրն է (Թևավոր) և ցույց է տալիս Թորոսի արագաշարժությունն ու ճարպկությունը։ Դավթի հայրը՝ Մեծ Մհերը, վորոշ պատումներում հիշվում է իբրև Առյուծաձև Մհեր։ «Առյուծաձև» մակդիրը նա ստանում է ժողովրդի կողմից՝ Սասունը հարևան յերկրների հետ կապող ճանապարհին լույս ընկած առյուծին սպանելու առթիվ։ Դավթի թուրը, վոր նա ժառանգաբար ստանում է իր հորից, կրում է «Կայծակի» կամ «Կայծակեղեն» մակդիրը, վոր ակնարկում է նրա հրեղեն եյությունը։ Բացի այս և մի շարք այլ մշտական կամ կայուն մակդիրներից (Դեղձուն Ծամ, Վեցոտանն Լազգի և այլն), «Սասունցի Դավթի» բանաստեղծական լեզվի մեջ տեղին և ժամանակին գործ են ածվում նաև բազմաթիվ այլ, վոչ պակաս գունեղ ու գեղեցիկ մակդիրներ ու ածականներ (վոչ մշտական կամ կայուն)։ Որինակ՝ կանաչ կարիչ, քաղցրիկ մերիկ, մարդակը պառավ, ոլոկամորուս կամ թուխմորուս մարդ և այլն և այլն։ Փիչ չեն վեպում նաև նվազականները (ձեռնիկ, աչկիկ, գուրզիկ, սրտիկ, Թորոսիկ)։

Հայկական եպոսի վոճական տարրերից մեկն ել ժողովրդական առողջ յերգիծանքն է, վոր մի տեսակ զվարթություն է հաղորդում վեպին։ Այդ յերգիծանքը մեղմ է ու բարեկամական, յերբ վերաբերում է յուրայիններին և խիստ ու խայթող, յերբ ուղղված է թշնամիների դեմ։ Վեպը ծայրե ի ծայր համեմված է Սասնա ծռերի տարորինակ արարքներին վերաբերող բարի հումորով (տես՝ Ծուռ կամ Դալու Բաղդասարի հարբելը Ախմախու սարում, Մեծ Մհերի՝ վոտները կապած քուռակին ուսն առած տանելը, պատանի Դավթի՝ իր ընկեր նախորդների համար գյուղից հարիսա բերելը, Փոքր Մհերի մանուկ հասակում Սասնո գետի վրա կամուրջ կապելը և այլն և այլն)։

Փիչ չեն վեպում նաև խայթող յերգիծանքի որինակները (տես Ձենով Հովանի կնոջ Սարիայի կամ Վերգոյի ծաղրը ուղղված Մելիքի դեմ կռվի գնացող Դավթի հասցեին և վերջինիս պատասխանը կռվից վերադառնալուց հետո, Մսրա կանանց ծաղրը ուղղված Սասուն գնացող և այնտեղից դատարկաձեռն ու պատուհասված վերադարձող գոռող Կոզբադնին և այլն և այլն)։

«Սասունցի Դավթի» բանաստեղծական լեզվի կարևոր արժանիքներից է նաև նրա պատկերավորությունը։ Վեպը համեմված է կենդանի ու գունեղ գեղարվեստական պատկերներով, համեմատություններով ու նմանություններով։ Ճիշտ է, քանակով դրանք շատ չեն, բայց իրենց վորակով չեն զիջում մեր ժողովրդական բանահյուսության մյուս տեսակներում, հատկապես ժողովրդական սիրո յերգերում գործածվող հիանալի պատկերներին։ «Սասունցի Դավթի» պատկերների համար նյութ են ծառայում վեպի գործող անձանց արտաքինի ու ներքինի նկարագիրը, նրանց շրջապատի ընտանեկան և հասարակական կյանքի բազմապիսի յերևույթները, ժողովրդական կենցաղն ու հավատալիքները, բնությունը և այլն և այլն։ «Սասունցի Դավթի» պատկերավոր կտորների մեջ աչքի յե զարնում աշուղների գովքը Դավթի հարսնացու՝ գեղեցկուհի Խանդութ Խանումի մասին։ Մի քանի վարիանտներում այդ գովքը իր պատկերաշարով հասնում է գեղարվեստական բարձր կատարելության։ Այսպես, որինակ, վիպասաններից մեկը Դավթի առաջ Խանդութ Խանումի գովքն անելով, ասում է.

«Տ՚ասեմ, տի գովամ Խանդութ Խանում Դավթին,
Ենոր բոյ գյոլու եղեգ նման եր։
Տ՚ասեմ, տի գովամ Խանդութ Խանում Դավթին,
Ենոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեյդանն եր։
Տ՚ասեմ, տի գովամ Խանդութ Խանում Դավթին,
Ենոր աչքեր գինու կթիսայ եր» . . .

Ա. 918, 1068

Մի ուրիշը՝

«Կ՚երիշկեմ՝ Խանդութ խանում, ձեռ-վոտ կալամով քաշած է,
Ա՛խ հալա տրգո, կալամով քաշած է.

Կ՚իրիշկեմ՝ եղոր եղնդներ ռանդայով տաշած ե,
Ա՜խ հալա տըգո, ռանդայով տաշած ե.
Կ՚իրիշկեմ՝ երեսի կարմրութեն, նռան գինի ե,
Ա՜խ, հալա տըգո նռան գինի ե.
Կ՚իրիշկեմ՝ ենոր սիպտկութեն, գզած բամբակ ե,
Ա՜խ, հալա տըգո գզած բամբակ ե»...

Ա. 205

Մի յերբորդը՝

«Ընդրա աչքի թարթփներ ասեմ,
Կռնկի թեվու նման ե, լգո, մե չափ ավելի.
Ընդրա սիպտկութեն ասեմ,
Քանց մեկ որվա գալած ձուն սիպտակ ե, լգո, սիպտակ ե...

Ա. 679, Բ. 1052

Պատկերավոր ու գեղեցիկ ե մի քանի պատումներում նաև Դավթի պատասխան-յերգը գուսաններին, վորտեղ նա գունեղ ու յուրօրինակ համեմատություններով ու նմանություններով բացահայտում ե գուսաններին՝ Խանդութի բարեմասնությունների մասին նրանց գովքը լսելուց հետո իր ներսում կատարված մեծ հեղաշրջումը։ Ահա այդ պատասխան յերգերից մեկը.

«Գուսաններ, դու բարով եկաք.
Իմ սիրտ քանց կաթն անարատ եր,
Մերան թալիք մակարդիք։
Իմ սիրտ քանց Սասնա բերդն ամուր եր,
Քլունգ առաք, իմ հիմ քանդեցիք.
Իմ սիրտ քանց աշունքվա դետ դուլալ եր,
Դարնան սելավի նման պղտորիք»։

Ա. 284., Բ. 1055

«Սասունցի Դավթի» լավագույն պատկերավոր կտորներից ե պատանի Դավթի՝ Մելիքի անթիվ ու անհամար զորքի առաջ մի պահ սրդողելու մոմենտի նկարագիրը։ Ահա թե ինչպես ե արտահայտում Դավթին պաշարած բոպեական վախի այդ զգացումը մեր ամենաշնորհալի գեղջուկ վիպասաններից մեկը՝ Մոկացի Նախո Քեռին.

«Դավիթ ձին խեծավ, քշեց, գնաց,
Ելավ Լեռա սարի գլուխ։
Ինչ կը տեսնա, — իրիշկեց՝
Վոր քանի ս՚աստղ երկինք կա,

Մսրա Մելիք ընցկուն չադըր — խեվաթ զարկած ի մընչ դաշտին։
Դավիթ վոր տեսավ՝ վախացավ, ասաց.
Որհնա՜լ բարերար աստված,
Քո հրամանքն ե շատ.
Ցես ինչըխ անեմ։
Ենոնք ելնեն բամբակ (ե՜ր),
Ցես լե ելնեմ կրակ (ե՜ր),
Չեմ կարա զանոնք երեցըցի.
Ենոնք ելնեն դարնան ժատղաշ գառներ
Ցես լե ելնեմ դարնան քաղցած գելեր,
Չեմ կարա զանոնք կտրեցըցի»։

Ա. 24

Նույն մոմենտի նկարագիրը այլ ասացողների մոտ արտահայտված ե բոլորովին այլ ատաղձ ու կոլորիտ ունեցող պատկերներով ու համեմատություններով։

Նման համեմատաբար մեծ ու ամբողջական պատկերավոր կտորների հետ «Սասունցի Դավթի» մեջ մենք հանդիպում ենք նաև առանձին ծավալով փոքր, սակայն վոչ պակաս գեղեցիկ պատկերավոր արտահայտություններ, տողեր ու յերկտողեր (Թշնամու վրանների համեմատությունը յերկնքի աստղերի կամ ծովի ավազների հետ, ձիավոր Մհերի համեմատությունը սարի վրա բարձրացած սարի կամ ամրոցի հետ, Դավթի կողմից Թշնամու զորքերին կոտորելու համեմատությունը՝ հասած արտը փչացնող կարկուտի հետ և այլն և այլն)։

Հայ ժողովրդական վեպի, ինչպես և առհասարակ ժողովրդական վեպերի, արտահայտչական միջոցների մեջ կարևոր տեղ ունի չափազանցությունը (հիպերբոլան)։ Վերջինս մեր վեպի ամենաուժեղ ու աղդեցիկ արտահայտչական միջոցներից ե։ Իրենց սիրելի դյուցազուն հերոսներին գովերգելու և իդեալականացնելու, նրանց կատարած սխրագործությունները վառ կերպով ցուցադրելու համար մեր ժողովրդական վիպասանները առատորեն կիրառում են հիպերբոլան, արտահայտելով դրա մեջ ժողովրդի ուժի ու հզորության գաղափարը։ «Սասունցի Դավթի» մեջ չափազանցված են նախ և առաջ հերոսները (Սանասար, Մեծ Մհեր, Դավիթ, Փոքր Մհեր և այլն) իրենց անսովոր ֆիզիկական ուժով ու խիզախությամբ. նրանք մենակ կռվում են զանազան գերբնական եյակների ու գազանների (առյուծ, գել, վիշապ և այլն),

թշնամու հաղարավոր զորքերի դեմ և կարճ ժամանակում ու հեշտությամբ վոչնչացնում նրանց (տես Սանասարի՝ վիշապին սպանելը, Մեծ Մհերի առյուծին ձևելը, Դավթի կռիվը Մելիքի և Խանդութի հոր թշնամիների (Բապը Ֆրենկի և այլն) բազմամբոխ բանակների դեմ, Փոքր Մհերի կռիվը մարդակեր պառավի, Կուպ դևի դեմ և այլն և այլն)։ Այնուհետև, չափազանցռավի, Կուպ դևի դեմ և այլն և այլն)։ Այնուհետև, չափազանցված են հերոսների ձիերը (Քուռկիկ Չալալին, Վեցոտնեն Լազգին, Կապուտ ձին և այլն), իրենց անսովոր արագաթռչությամբ, ուժով ու դիմացկունությամբ նրանք իրենց տերերի հետ հավասար կռվում են թշնամիների դեմ և կոտորում (պոչով, շնչով, վոտներով և այլն), հարկավոր դեպքում լեզու յեն առնում ու խոսում, փրկում իրենց տերերին դժվարին մոմենտներին։ Չափազանցված են հերոսների գործածած զենքերի (թուր, գուրզ և այլն) հատկությունները, մասնավորապես Թուր Կայծակին, վոր կըտրում է պողպատե սյունը, 40 ջրաղացի քարը և այլն։ Չափազանցված են դեպքերը—կռիվ, մենամարտ, մրցումներ և այլն։ Չափազանցության վրա յե կառուցված նաև հերոսների հագուստների, զրահների նկարագիրը, վեպում յերևան յեկող կանանց (Խանդութ, Գոհար և այլն) արտաքին գեղեցկությունները և այլն և այլն։

Չափազանցության հարակից արտահայտչական բավական ուժեղ մի միջոց է և հակադրությունը (կոնտրաստ), վոր նույնպես առատորեն կիրառված է մեր վեպում։ «Սասունցի Դավթի» մեջ կողք կողքի հանդես են գալիս՝ լավն ու վատը, չարն ու բարին, յերևակայականն ու իրականը։ Յեթե Մելիքը չար է ու դաժան, ապա Դավիթը բարի յե ու մեղմ։ Յեթե Վերգոն վախկոտ է ու տմարդի, ապա Քեռի Թորոսը քաջ է, մեծահոգի և այլն։ Հակադրելով իրար դրականն ու բացասականը ժողովրդական վեպասանները դրանով իսկ ավելի յեն ընդգծում առաջինի առավելությունները։ Հակադրությամբ նրանք հասնում են նույն նպատակին, ինչ և չափազանցությամբ—այն է ժողովրդին սիրելի հերոսների գովերգ ու իդեալականացում։

Հայ ժողովրդական վեպի գեղարվեստական հիմնական արժանիքներից մեկը նրա դինամիզմն է։ Վեպի մեջ շատ քիչ են նկարագրական կտորները. սյուժեն ծավալվում և զարգանում է մեծ արագությամբ իրար հաջորդող և փոփոխվող գործողություններով։ Հերոսների բնավորությունները, նրանց ներքին

ապրումները բացահայտվում են վոչ թե պատմելով կամ նկարագրելով, այլ գործողության մեջ։

«Սասունցի Դավթին» թարմություն և գույն են տալիս բազմաթիվ գեղեցիկ յերգերը, վորոնցով առանձնապես հարուստ է վեպի Դավթի ճյուղը և մասնավորապես Խանդութի բաժինը։

Յերգով է ասվում, նախ և առաջ, վեպի նախերգանքը կամ ինչպես ժողովուրդն է ասում «վոզորմիսը»։ Այնուհետև, յերգ է Մսրա Մելիքի զորահավաքի կոչը։ Յերգով են ասվում Զենով Հովանի ափսոսանքը և Դավթի վախը թշնամու բազմամարդ բանակի հանդեպ։ Յերգեր են՝ Դավթի դիմում-նախազգուշացումը ուղղված Մելիքի բանակին, Խանդութ Խանումի գովքը, վոր անում են Դավթի առաջ աշուղները, Դավթի ու Համզոլի յերկախոսությունը։ Յերգով է Խանդութը նախատում Պարոն Աստղիկին Դավթի գլխին կրակ թափելու համար կամ միջամտում հոր և վորդու (Դավթի և Փոքր Մհերի) կռվին։ Յերգով է Մհերը դիմում իր մեռած ծնողների գերեզմանին պատմելով նրանց իր վիճակի մասին և այլն և այլն։

Նմուշի համար մեջ բերենք այդ յերգերից յերկուսը.

«Մսրա Մելիքի զորահավաքը

«Մսրա Մելիք ղդալալ եքից քաղաք,
Կանչեց ասքար ժողվելու, ասաց.
Թը ժողվիմ խազար խինգ խարիր խամար
Նորալուկ մանուկ (Էր).
Թը ժողվիմ խազար խինգ խարիր խամար
Լա բեղդար տղա (Էր).
Թը ժողվիմ խազար խինգ խարիր խամար
Լա թուխ մորուս (Էր).
Թը ժողվիմ խազար խինգ խարիր խամար
Սըվտակ ժորուս (Էր)»։

Ա. 17

Դավթի՝ թշնամիների բանակին իմաց տալը

«Վով քնիր եք՝ հարթուն կացեք,
Ախ հալա, արթուն կացեք.
Վով արթուն եք՝ ելեք կայնեցեք,
Ախ հալա, ելեք կայնեցեք.
Վով կայներ եք՝ ձեր զենքեր կապեցեք,

Ախ հալա, զենքեր կապեցեք.
Վով ձեր զենքեր կապեր եք, ձեր ձիանք թամքեցեք.
Ախ հալա, ձեր ձիանք թամքեցեք.
Վով ձեր ձիանք թամքեր եք՝ ելեք հեծեցեք,
Ախ հալա, ելեք հեծեցեք.
Զասեք՝ Դավիթ զող եկավ, զող գնաց»։

Ա. 24

Վերջին հանգամանքը, որ անհրաժեշտ է նշել «Սասունցի Դավթի» արվեստի մասին խոսելիս՝ դա նրա տաղաչափական կառուցվածքն է։ Մյուս արտահայտչական միջոցների նման մեր վեպի վոտանավորը ևս միանգամայն համապատասխանում է նրա բովանդակությանը։ Դա մի ազատ, հանդարտ ու հանդիսավոր չափ է, որը հիանալի կերպով դրսևորում է վեպի հերոսական-դյուցազնական բովանդակությունը։ «Սասունցի Դավթի» պատումների մեծ մասը վոտանավոր է, յամբական պարզոնյա ազատ վոտանավոր անապեստի խառնուրդով և անապեստյան ազատ վոտանավոր յամբի խառնուրդով։ Այդ վոտանավորները սովորաբար միմյանց հետ խառը գործ են ածվում անխտիր, բայց իրենց թվով իշխող մնում են յամբական տողերը։ Հաճախ դրանց հետ միանում են և մաքուր յամբական ու մաքուր անապեստյան տողեր[1]։

* * *

«Սասունցի Դավիթ»-ը հայ ժողովրդի անմահ ստեղծագործությունն է։ Նրա մեջ մեծ պայծառությամբ ու թափով արտահայտված են մեր ժողովրդի ազատասիրական վոգին ու հերոսությունը, նրա անդուլ պայքարը ոտարերկրյա նվաճողների դեմ։

Դավթի հայրենասիրությունը, սերը դեպի ժողովուրդը, անսասան կամքը, խիզախությունը, քաջությունը այսոր էլ հուզում են մեզ։

«Սասունցի Դավիթ»-ն իր խորը դեմոկրատիզմով և գեղարվեստական բարձր արժանիքներով հանդիսանում է աշխարհիս լավագույն էպոսներից մեկը։

---

1) Տես Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափությունը, Ցերևան 1933 թ. էջ 360—370։

ՀՍՍՌ-ՕՐԱ

358

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲԼԻ

А. ГАНАЛАНЯН

ДАВИД САСУНСКИЙ

Лекция прочитанная в лекториуме
Ереванск. Госунта 18-го декабря 1938 г.

ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАНСКОГО ГОСУНТА

ՀՀ Ազգային գրադարան
NL0373209

64.384